



631.1  
4-80



300  
1408-40h



30 JUL 2010

Հրատարակութիւն ԲԺ. Ա. Բուդոյեանի:

№ 9455

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# “ՀԱՅԱԿԵՐ”

Մանկական պատկերազարդ ամսագրի:

Տարեկան գինը 4 րոբ.

Հասցե՝ Թիֆլիս, Բեհբութեան փ. № 25.

Խմբ. հրատ. Կատարինէ Լիսիցեան:

---

Լոյս տեսաւ և վաճառուում է գրախանութներում  
Բժ. Ա. Ք Ա. Թ Ա. Ն Ե Ա. Ն Ի

## ԸՆԻՔՆԵՐԻ ՃԻԾՈՒՆԵՐ

Եւ դրանցից առաջացած նիւանդուրինները, նկարներով.  
գինն է 10 կու.

---

2013 JUL 14

631  
4-80

Հրատարակութիւն Բժ. Ա. Բուդուղեանի:

Ի Ն Չ Պ Ե Ս Հ Ի Մ Ն Ե Լ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՎԱԾՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ա. Ե. ԿՈՒԼԵԺՆՅԱՅ

11981  
1003



Պ Ե Ա Տ Ի Գ Ո Ր Ս Կ  
Ելեֆ.-սպառամ «Սովհասեամ» եւ Լիսենկո»:  
1908

Электропечатня «Сукіасяиц' и Лысенко». въ Пятигорскѣ

## Ե Ր Կ Ո Ւ Խ Խ Ո Ս Վ

Շատ անգամ մատնազոյց է արւած, անհրաժեշտ  
էլ է մշտապէս կրկնել՝ որ բոլորին մատչելի լի-  
նի, թէ պէտք է լուրջ ուշադրութիւն գարձնել  
մեր գիւղացիութեան վրայ, որը տարաբախտա-  
բար մոռացութեան է մատնուած եղել մինչև  
այժմ, չի գրաւել այնքան հետաքրքրութիւն,  
որքան արժանի է եղել:

Թէպէտ պէտք է ասել, որ վերջին երկու  
երեք տարին մեր կուլտուրական-հասարակական  
ընկերութիւններն ընդարձակ նպատակներ ունին  
բարձրացնելու հայ գիւղն ամեն տեղ և հասցնել  
նրան ներկայ կարգերում հնարաւոր բարեկեցու-  
թեան, որը և քիչ թէ շատ իրազործում են  
արդէն կեանքի մէջ:

Արդէն մենք տեսնում ենք, որ տեղ տեղ  
հաստատում են գիւղական գրադարան-ընթեր-  
ցարաններ, հիմնուում են գիւղական հասարակա-  
կան ամբարներ, գիւղական բանկեր, սպառողա-  
կան խանութներ, որոնք ձգտում են գուրս խլել

մեր գիւղացիութիւնն անխիղճ վաշխառուների  
ճանկերից:

Եւ այս բոլորը բարեբախտաբար հայ գիւղական կեանքում արդէն իրականութիւն է դարձել:

Գուցէ ապագայում ուրախ պէտք է լինենք, որ այդ փայլուն աստղերը մեր հորիզոնում բոլորն ի միասին մեծ լոյս կըտան, որը և միակ ուղիղ ճանապարհն է բարձրացնելու մեր ժողովուրդը թէ անաեսապէս և թէ բարոյապէս:

Մենք կարծում ենք, որ կուլտուրական այս մեծ գործն աւելի առաջ կընթանայ, եթէ մենք, ունենալով զարգացած, գաղափարական գիւղատնտեսներ, մեր ուսումնարաններում հողին և քնութեան վերաբերեալ համրօգուտ գիտելիքներ աւանդենք:

Մենք չենք սխալի, եթէ ասենք, որ մեր բոլոր գիւղական ուսումնարաններին կից և նրանց շարունակութիւնը պէտք է լինեն գիւղատնտեսական և տեխնիքական դասընթացներ, որպէսզի գիւղացին, այդ տեսակ ուսումնարանն աւարտելով, կարողանայ աւելի գիտակցորէն վարւել հողի հետ:

Թող թւով քիչ լինին ուսումնարանները, սակայն գոնէ տեղտեղ ունենանք այնպիսիները, որտեղ գէթ չորրորդն հինգերորդ տարին աւանդեն գիւղատնտեսական գիտելիքներ՝ համաձայն իւրաքանչիւր վայրի բնական պայմաններին:

Հարց է ծագում. որտեղից գտնենք ուսուցիչներ:

Անպատճառ պէտք է հիմնել գիւղատնտեսական ուսուցչանոց. ահա մի լուրջ հարց, կեանքի պահանջ, ներկայ պայմաններում, որի վրայ մենք լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնենք:

Պէտք է աշխատել կարճ ժամանակամիջոցում հիմնել այդօրինակ մի ուսուցչանոց:

Կարելի է գրականօրէն ասել, որ գիւղատնտես վարժապետը գիւղում ամենացանկալի հիւրն ու բարեկամը կլինի:

Եւ ճիշտ որ, այն վայրում, որտեղ գիւղատնտեսական զրոյցներ են տեղի ունենում, կամ մի նշոյլ է երեսում տեղական չարն ու բարին ցոյց տալու աշխատանքի, գիւղացիք ամենայն ուրախութեամբ ընդառաջ են գալիս այդ տեսակ ձգտումներին: Եւ այդ վարժապետները չեն կարող չտարածել միաւեղ աշխատանի վսեւ գաղափարը, որը միմիայն ընդունակ է մարդուն ազնւացնելու:

Մենք թոյլ ենք տալիս մեզ հրատարակելու կուլըմնու այս փոքրիկ գրքոյկը, որը մեր գիւղացիութեան մէջ կը տարածէ վերոյիշեալ գաղափարները:

Թող մեր այս փոքրիկ լուման չմնայ «Ճայն բարբառոյ յանապատի»:

Բերնից բերան պէտք է խօսենք, զրենք, քարոզենք և տարածենք, որ մեզ անհրաժեշտ են գիւղատնտեսական, տեխնիքական և անայնա-

գործական գիտելիքներ. պէտք է հիմնւեն ուսուցչամոցներ:

Այն վայրերում, ուր պիտի հիմնւեն՝ չորսամեայ ընդհանուր ուսումնարաններ, զոնէ միտարին լինի մասնագիտական, բնագիտական, չմոռանակը՝ երկուեռ:

ԲԺ. Ա. ԲՈՒԺՈՒՂԵԱՆ:

10 ապրիլի 1908 թ.  
Ս.-ՊԵՏԵՐԲՈՎՐԴ



ԳԻՒՂԱՏՆՑԵՍԱԿԱՆ ՀՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ  
ԳԻՒՂՈՒՄ:

(Նրանց իրաւունքները, գիւղացիուրեան համար տևեցած նշանակուրինը եւ զործունեւուրինը):

Վերջին տարիների դէպքերը բաց արին գիւղացու աչքերը և ստիպեցին նրան իր շրջապատի վերայ հայացք գցելու։ Գիւղական աշխարհի շրջանակը ընդարձակւեց...

Գիւղացիութիւնը հասկացաւ հին կեանքը և անդառնալիօրէն գատապարտեց նրան. միևնոյն ժամանակ, ըմբռնելով հին կեանքի ամբողջ անքնականութիւնը, սկսեց նորը փնտրել...

Այդ բոլորը չէր կարող, ինարկէ, չանդրագառնալ նաև գիւղացու տնտեսութեան վրայ։ Եթէ նա առաջ բացասաբար էր վերաբերում տնտեսութեան բոլոր նորմուծութիւններին և բարւը բուժներին, գատապարտելով դրանք իբրև աղայական յերիւրանքներ, ներկայումս, ընդհակառակը, ագահաբար կլանում է ամեն մի նորութիւն, որը կարող է օգտաւէտ կերպով զործադրել իր տընտեսութեան մէջ։ Այդ նկատել են թէ՛ զեմստօյական ագրոնոմները (հողագէտները), որոնք ներկայումս աւելի ցանկալի հիւրեր են գիւղում, քանի երկուերեք տարի առաջ և թէ նրանք բոլորը,

որոնք մօտիկ շփում ունեն զիւղի հետ և հետեւում  
են նրա առաջադրած հարցերին ու շահերին:

Դորա հետ միաժամանակ, առաջադէմ զիւ-  
ղացիք սկսել են արդէն հասկանալ, որ գեռ քիչ  
է մշակութեան եւ տնտեսավարութեան ձեւերի  
բարւոքումն, բաւական չէ խմանալ այս այն օդ-  
տակար գործիքը կամ պարարտանիւթը. պէտքէ  
իմանալ նաև որտե՞ղ գնել, այլապէս կարելի է  
կրկնակի վճարել անպէտք սերմի կամ գութանի հա-  
մար և այդպիսի «նորմուծութիւնը» աիրոջը վնասից  
զատ ոչինչ չի բերի և երկար ժամանակով կը  
կոտրէ նրա ցանկութիւնը դէպի նորմուծութիւն-  
ները:

Գիւղացին իր անտեսութեան բոլոր պարա-  
գաները սովորաբար շատ թանկ է գնում, ծա-  
խողներին մեծամեծ փողեր գերվճարելով: Այն  
ինչ իր անտեսութեան բերքերը (հաց, կանեփ,  
տաւար և այլն) սովորած է վաճառել չնչին գնով  
և աւելի մեծ վնասներ կրել, քան գնելիս:

Կարելի է այդ բոլորից խոյս տալ: Այդբանում  
զիւղացիք կարող են իրանք իրանց օգնել, առանց  
ուրիշի վերայ յոյս գնելու և կողմնակի օգնութիւն  
պահանջելու: Առածն ասում է «իւրաքանչիւր ոք  
իր բարդի դարբինն է»: Եւ թէն մինչեւ այժմ  
այդ առածը, ակնյայօրէն, մեզ համար չէր, սա-  
կայն ներկայումս մեր անտեսութիւնը վերաշնե-  
լու, նրան աւելի ձեռնտու և արդիւնաւետ դար-  
ձնելու համար պիտի անենք այն, ինչ որ կա-  
րող ենք:

Դրան տանող մի ճանապարհ կայ՝ միուրիւնը,  
փոխագարձ օգնութիւնը: Միայն միացումն է զօ-  
րեղ և ինքնուրոյն գարձնում անջատներին ու  
թոյլերին: Միութիւններ կազմելով միայն կը կա-  
րողանայ զիւղացին իր անտեսութիւնը վերաշի-  
նել: Եւ սուս զիւղացիութիւնը սոտք է դրել ար-  
դէն այդ հողի վրայ՝ մեր զիւղերումն էլ հիմնւում  
են զիւղատնտեսական միութիւններ. փոխատու  
սպառողական և զիւղատնտեսական ընկերութիւն-  
ների թիւը օր աւուր աճում է:

Գիւղացու անտեսութիւնը բարւոքելու տե-  
սակէտից առանձնապէս կարեւոր նշանակութիւն  
են ստանում իրանց նպատակների կողմից զիւ-  
ղատնտեսական ընկերութիւնները. վերջիններս  
զիւղելիքներ են մատակարարում զիւղացուն, թէ  
ինչ ձեւով կարելի է աւելի լաւ վարել անտեսութիւ-  
նը, օգնում են բարւոքումների համար անհրաժեշտ  
գործիքներն ու սերմերը և այն աւելի էժան  
գնելու և իր անտեսութեան բերքերը աւելի թանկ  
ծախելու:

Սակայն, բացի այդ, զիւղատնտեսական ընկե-  
րութիւնները զիւղացիութեան ահագին օգուտ են  
բերում, զարթեցնելով նրանում ինքնուրոյնու-  
թիւն, սովորեցնելով օգնել ինքն իրան առանց  
ուրիշների վերայ յոյս գնելու, միմիայն իր սե-  
փական ոյժերի վրայ վստահելով: Առանց սխալ-  
ւելու կարելի է ասել, որ նրանք զիւղում հա-  
սարակական կեանքի դարրոցն են հանդիսանում:  
Ի՞նչ բան է ուրեմն զիւղատնտեսական ընկե-

ըութիւնը, ի՞նչ իրաւունքներ է վայելում, ինչնի  
է զբաղւում և ի՞նչ է նրա կոչումը:

Հստ 1907 թւականինորմալ կանոնադրութեան  
մէկ կամ մի քանի մօտակայ գիւղերից (աւելի  
յաճախ ամբողջ գիւղաշրջանից) մի քանի հոգի  
(առանց սեռի և դասակարգի խտրութեան) կա-  
րող են կազմել գիւղատնտեսական ընկերութիւն,  
միանալով ընդհանուր ոյժերով գիւղացիական  
տնտեսութիւնը բարւոքելու և այլ լուսաւորիչ  
նպատակներով:

Այդ նպատակով թոյլ է տրւամ ընկերու-  
թեան անդամներին ժողովներ սարքել, որտեղ մի-  
ատեղ քննում են գիւղացիական կարիքները և  
տնտեսութեան պահանջները. գիւղատնտեսական  
գիտելիքներ տարածելու համար հիմնել գրադա-  
րաններ, ընթերցարաններ, հասարակական դասա-  
խոսաթիւններ և զրոյցներ, գիւղատնտեսական  
դպրոցներ. նոյն նպատակով սարքել ցուցական և  
փորձնական դաշտեր, օրինակելի տնտեսութիւն-  
ներ, դաստակերաններ (ֆերմաններ), պարտէզներ,  
պտղատու ծառերի բուծարաններ, ցուցական բան-  
ջարանոցներ, փեթականոցներ. տարածել երկրա-  
գործական կատարելագործւած գործիքներ և մե-  
քենաններ, բարելաւած սերմեր, պարարտանիւ-  
թեր և այլն. սարքել գիւղատնտեսական ցուցահան-  
դէններ, գործիքների քննութիւններ և մրցութիւն-  
ներ. հոգալ իր անդամներին էժան գնով գիւղա-  
տնտեսական անհրաժեշտ առարկաներ մատակարա-  
րելու մասին, հիմնելով երկրագործական գործիք-

ների, սերմի, պարարտանիւթի, առաղձի, երկա-  
թի, կղմինտի և այլ առարկաների պահեստներ:

Նոյնպէս հոգալ գիւղացիական տնտեսութեան  
բերքերը վաճառելու մասին, ամբարելով և  
վաճառելով հաց, կանեփ, խոտ, ձու և այլն:

Վերջապէս ընկերութիւնը կարող է իր վերայ  
վերցնել գիւղում փոխատու ընկերութիւն, սպառո-  
ղական միութիւն, մեղուաբուծական և թռչնաբու-  
ծական ընկերութիւններ և գիւղացիութեան օգտա-  
կար այլ հիմնարկութիւններ կազմակերպելու  
գործը:

Բացի այդ, ընկերութիւնը իրաւունք է վայ-  
ելում հողաշինարարութեան և երկրագործութեան  
գիւղաւոր վարչութեան խնդրատու լինել իր գոր-  
ծունէութեան շրջանի գիւղատնտեսութեան կա-  
րիքների մասին:

Իբրև մի հաստատութիւն, գիւղատնտե-  
սական ընկերութիւնը կարող է շարժական և ան-  
շարժ ստացուածք ձեռք բերել և իր անունով  
պայմաններ ու համաձայնութիւններ կապել՝  
հիմնելով ընդհանուր օրէնքների վրայ:

Իր բոլոր պարտաւորութիւնների համար նա  
պատասխանատու է սեփական ստացւածքով և  
անդամագնարով. ընկերութեան գործերի պա-  
տասխանատութիւնը չի անցնում նրա անդամ-  
ների ստացւածքի վրայ, ինչպէս տեղի է ունե-  
նում փոխատու ընկերութիւնների վերաբերմաբ:

Ահա սրանք են համառօտապէս գիւղատնտե-

սական ընկերութիւնների իրաւունքներն ու խընդիրները ըստ նորմալ կանոնադրութեան:

Գիւղատնաեսական ընկերութիւնները կազմակերպելուց և նրա բացման թոյլատւութիւն ստանալուց յետոյ, հիմնադիր անդամները ընդհանար ժողով են գումարում և որոշում, թէ ինչով պէտք է զբաղի ընկերութիւնը առաջի պահուն, իր գործունէութեան սկզբին և ամենից առաջ գիւղատնաեսաթեան որ կարիքների վրայ պիտի ուշադրութիւն դարձնի:

Իսկ այդ կարիքները սովորաբար այնքան շատ են լինում, որ ընդհանրապէս շատ դժւար է լինում որոշել, թէ ինչով պէտք է պարապել հէնց այժմ և ինչը կարելի է ապագային յետաձգել: Գիւղացին հողը մշակում է անժամանակ և վատ գործիքներով, ցանում է չզտած սերմեր, յաճախ հասկացողութիւն չունի արօտացանութեան և հանքային պարաբռացման մասին, նա չգիտէ, թէ ինչ ձեռով կարելի է աւելի լաւ անտեսավարել (և ումնից պիտի սովորէր!). չգիտէ, թէ որտեղից կարելի է զնել աւելի էժան և լաւ գութան, սերմ և այլն: Գիւղացու տաւարը փոքրանում և այլամեռումէ մշտական թերակերութիւնից, պէտք է կերիւ առարեարի բարւոքման մասին հոգս քաշել: Գիւղացին իր՝ բերքը չնչին զնով է վաճառում, որովհետեւ փողի կարիք ունի եւ միւնոյն ժամանակ չփիտիթէ ում ծախսի 20+30 պուդ ցորենք, ինչ ուղարկուած առանողական, որին նա անով տեղով պարտական է: Արանք բարը այնպիսի կա-

րիքներ են, որոնցով պէտք է զբաղուի գիւղատնաեսական ընկերութիւնը, եթէ ցանկութիւն ունի զիւղացու անտեսութեան օգուտ բերելու:

Ուստի եւ Ռուսատանում գոյութիւն ունեցող զիւղատնաեսական ընկերութիւնների մեծամանութեան գործունէութիւնը ձգտամն անի պլաւորապէս:

1. Ամենատեսակ ձանապարհներով զիւղացիաթեան մէջ զիտելիքներ աարածելու, թէ ի՞նչ ձեռով կարելի է աւելի լաւ մշակել հողը և ձեռնոտու կերպով անտեսավարել:

2. Աջակցելու զիւղացու անտեսութիւնը բարւոքելու համար անհրաժեշտ բոլոր գործիքները, մեքենաները, սերմերը, պարարտանիւթերն և այլ առարկաները գնելու ըստ հնարաւորութեան առաջին ձեռից, լաւ տեսակից և աւելի էժան զնով:

3. Գիւղացու անտեսութեան բերքերը ձեռնոտու զնով ի միասին և մեծաքանակ վաճառելու և, վերջապէս:

4. Գիւղատնաեսական ընկերութեան միջոցով օգտելու այնպիսի գործիքներից և մեքենաներից, որոնց ձեռք բերելու առանձին զիւղացու ոյժից վեր է, ինչպէս, օրինակ, թանկագին զատող և սերմանիչ մեքենաներ, հնձի մեքենաներ և այլն:

Ահա թէ ինչով են օգտակար գիւղատնաեսական մանը ընկերաթիւնները ընդհանուր առմամբ: Գիւղացիաթիւնն արդէն զնահատել է զրանց

կարեսը նշանակութիւնը զիւղի համար. Առաջ կալւածատէրեն էին հիմնում զիւղատնտեսական ընկերութիւններ, այն էլ քաղաքում: Իսկ զիւղացիական ընկերութիւնները հանդէս են եկել զիւղում մօտ ժամանակներս և նրանց թիւը հէնց միանգամից սկսեց արագօրէն աճել: Այսպէս, օրինակ, մինչև 1901 թուականը հիմնած էր ընդամենը 200 ընկերութիւն, 1902 թւականին զրանց թիւը հասնում էր արգէն մինչև 400-ի, և 1905 թւականին, 700-ից աւել. իսկ ներկայումս նրանց թիւը 1500-ից էլ անցնում է: Առանձին նահանգներից գուղատնտեսական ընկերութիւններով առանձնապէս հարուստ են՝ Պոլտաւայի, Սամարայի, Սարատովի, Պերմի, Վեևակայի, Չելնիգովի, Կուրսկի, իսկ վերջերս Մոսկայի և Պետերբուրգի նահանգները:

Գիւղատնտեսական ընկերութիւնների արագ աճումը մեր զիւղերում բոլորովին հասկանալի է: Գիւղացիութիւնը տնտեսական իր ծանր կացութիւնից դուրս գալու միջոցների է փնտրում: Եւ ելքը գտնում է զիւղատնտեսական ընկերութիւնների մէջ, որոնք հէնց այն են ներկայացնում, ինչ որ նրան անհրաժեշտ է:

Իհարկէ, ամբողջ Ռուսաստանի համար շատ քիչ է 1500 գիւղատնտեսական ընկերութիւն, մասնաւոր Գերմանիայի հետ համեմատած, որտեղ նրանց թիւը մօտ 20000-ի է հասնում: Փոքրիկ Դանիան ամբողջովին ծածկւած է զիւղատնտեսական այլ և այլ միութիւնների խիտ ցանցով:

Թրանսիայում նրանց թիւը մօտ 3500 է: Արեմուաքում սակաւաղէպէ այսպիսի զիւղ կամ շըրջան, որը իր զիւղատնտեսական ընկերութիւնը չունենայ: Բայց զրա պատճառներն էլ հասկանալի են՝ մեր կեանքի հին կարգերը չեն նպաստել զիւղացու ինքնազործունէութեան զարգացման. այդ կարգերը թոյլ չեն տւել, որ իւրաքանչիւր ոք ինքը կոէ իւր բաղդը:

Այդ պատճառով էլ վերջին ժամանակներս սկսեցին նկատելի կերպով զարգանալ զիւղատնտեսական ընկերութիւնները. պէտք է ենթագրել, որ նրանց այդ զարգացումը հետզհետէ աւելի ու աւելի արագօրէն առաջ կերթայ:

## Բ.

Ի՞նչ են անում եւ ի՞նչ կարող են անել զիւղատնտեսական ընկերութիւնները:

ա. Գիւղատնտեսական զիսելիիների տարածումը զիւղում:

Ոչ մի տեղ գուցէ ոռւսաց «յաւէտ ապրիր, յաւէտ ուսիր» առածը այն աստիճան գործադրելի չէ, ինչպէս զիւղատնտեսութեան մէջ: Տնտեսութիւնը պէտք է սովորել, այն էլ՝ մշտապէս. ամեն մի տարին իր հետ բերում է ուկէ նոր բան, որ զիւղացու համար ձեռնտու է և գործադրելի:

Իսկ եթէ ինկատի առնենք մեր զիւղացու տնտեսութեան յետամնացութիւնը, դժւար չի լինի տեսնել, թէ ո՞րքան զիտելիքներ են պակա-

սում նրան՝ իր անտեսութիւնը բարւոքելու համար։ Բաւական է, որ համեմատենք (եթէ մէկը առիթ է ունեցել տեսնելու) գիւղացիական արախշերալ և նրա կողքին օրինակելի կալւածքի ցանւած գաշտերը, որ համոզւենք, թէ «գիտութիւնը ոյժ է»։ Յամաք, թեթե հասկեր մի կողմից և լիքը, ծանրութիւնից կորացած հասկեր միւս կողմից։ Մի տարբերութիւն, որ սարսափ է աղդում, և միենայն ժամանակ հասկանալի իւրաքանչիւրին, ով գիտի, թէ ինչպէս է մշակել թէ մէկ և թէ միւս հողամասը, ով է իմանում, թէ առաջին գէպըում անտեսութիւնը վարում է փոքրիկ հողաբաժնի տպէտ տէրը, իսկ երկրորդ գէպըում կրթւած կալւածատէրը կամ կառավարիչը։ Սակայն խոշոր, օրինակելի կալւածքում գործադրւած շատ բարւոքումներ, (հողի լաւ մշակութիւն, սերմեր, պարարտացումն և այլն) մատչելի են նաև մանր սեփականատիրոջ ու նրան ևս հաւասարապէս ձեռնոտու են և օգտակար։ Անհրաժեշտ է միայն, որ գիւղացին տեղեակ լինի և հասկանայ գրանց օգուար և գործադրել սովորի։ Բայց խուլ, յետամաց գիւղում նստած, առանձին աշխատելով և նսար չունենալով օգտակար գրքեր ու թերթեր կարգալու, նաև որ յաճախ անդրագէտ է և տպէտ, որտեղից կարող է իմանալ այդ բոլորը։

Հէնց գիւղատնտեսական ընկերութիւններն են, որ իրանց նպատակ են գնում օգնելու գիւղացուն անտեսութիւնը բարւոքելու համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու գործում։ Այդ

կատարում են զանազան միջոցներով։

Նախ և առաջ մեծ նշանակութիւն ունի արդէն իսկ այն, որ գիւղատնտեսական ընկերութիւն հիմնելով, մինչև այդ առանձին ապրող գիւղացիք հաւաքւում են իրանց գիւղում միատեղ՝ իրանց անտեսական կարիքները միասին քննելու։ Դրեթէ բոլոր ընկերութիւնները տարին մի քանի անգամ անդամների ընդհանուր ժողով են գումարում երբեմն աւելի յաճախ կամ սակաւ, նայած կարիքին։

Այդուեղ, իրանց շրջանում, գիւղացիք կարող են խորհուրդ անել, թէ ի՞նչ ձեռվ աւելի լաւ է վարել անտեսութիւնը։ Բոլորը միատեսակ չեն մշակում հողը՝ որը խորն է հերկում գետինը գեռ նորերս գնած գութանով, որը հին ձեռվ փորում է հողը պապենական արօրով. մէկը զնել է գիւղացիներին գեռ անծանօթ մեքենայ, օրինակ, շաբաթվ ցանելու, մի ուրիշը ձեռք է բերել և ցանել է վարսակի լաւատեսակ սերմեր և այլն։ Նայած հողի մշակութեան ձերն, սերմի տեսակին, բերը զանազան է լինում, որը շատ է ստանում, որը՝ քիչ։ Այդ բոլորի մասին կարելի է խորհրդածել, միտք անել, թէ որը լաւ է։ Եթէ մէկը վարսակի լաւատեսակ սերմեր ցանելով կամ ցանքսը հանքային նիւթերով պարարտացնելուց յետոյ իւրաքանչիւր գեսեատինին իր հարևաններից 15—20 պուդ աւել է ստացել, միւսներն էլ ընկերութեան ժողովում նրանից այդ լսելով, ձեռք կը բերեն լաւ սերմ կամ կսկսն հողի պարար-

տացումն գործ դնել և այդպիսով նոյնպիսի օգուտ կըստանան։ Նոյնը կարելի է ասել նուև մեքենաների, նոր գութանների և առհասարակ բոլոր գիւղատնտեսական գործերի մասին։

Իւրաքանչիւր հողագործ միշտ կըգտնի (յաջողութիւն կամ անյաջողութիւն) իր նմաններին հազորդելու և նրանց հետ խորհրդակցելու։ Ամեն ոք շատ բան կըստվորի միւսից, եթէ ցանկանայ։ Այդ պատճառով էլ գիւղատնտեսական ընկերութիւնների ընդհանուր ժողովներին տնտեսական բոլոր գործերը մեծ ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ են քննուում։

Հէնց այդ ժողովներում էլ գիւղական հողագործները մինչեւ այդ իրանց անծանօթ շատ նորութիւններ են լուսւմ։ Պոլտաւայի նահանգի գիւղատնտեսական ընկերութիւնների համարեա ոչ մի նիստը չի անցնում առանց գեմստօյի ազգունումի (հողագէտի) կամ երկրագործութեան գեպարտամենտի ունչ մասնագէտի (կենդանաբուծութեան, մեղւաբուծութեան, պարտիզանութեան ևայն) կամ գեմստօյի պարտիզանի ու այլ տեղեակ անձերի մասնակցութեան, որոնք ուսումնասիրել են գիւղատնտեսական գիտութիւնը և ծանօթ են իրենց մասնագիտութեան վերաբերեալ բոլոր նորութիւններին։ Ընկերութիւններից մի քանիսի քարտուղարները գիւղատնտեսական կըրթութիւն ստացած անձեր են։

Այդ բոլոր անձինք մեծ օգուտ են բերում գիւղատնտեսական ընկերութիւններին և սիրով

յաճախելով ժողովները, հաղորդում են գիւղացիներին նրանց այնքան անհրաժեշտ աեղեկութիւնները. իսկ գիւղացիք գիմում են նրանց արևակեսութեան մէջ իրանց հետաքրքրող այս կամ այն հարցի մասին խորհուրդ և ցուցմունք իննդրելով։

Ազրոնոմներն և այլ մասնագէտները ժողովներում յաճախ գիւղատնտեսութիւնից զեկուցումներ և գասախօսութիւններ են կարդում, զրոյցներ են սարքում հողի մշակութեան, արօտացանութեան, տաւարի բարւոքման, նոր մեքենաների և այլ գործիքների մասին։ Հէնց այդտեղ էլ նիստերում, յաճախ անդամներին բաժանում են կարգացւածի առթիւ գրքոյներ և թերթիկներ, գիւղատնտեսութեան վերաբերեալ գրաւոր հրահանգներ։

Ընկերութեան անդամներին հետաքրքրող հարցերի մասին մի հասկացողութիւն տալու համար թւենք գրանցից մի քանիսում կարգացւած զեկուցումները։ Այսպէս օրինակ կարլովի գիւղատնտեսական ընկերութեան մէջ 1904 և 1905 թւականին քննուել են հետևեալ զեկուցումները՝ «կերաբոյսեր ցանելու մասին», «հողի մշակութիւնը գարնանացանի համար և ցանումը», «պարարտացրած և չպարարտացրած ցելուտատեղի (հարոսի) մասին», «ցանքսացանութեան մասին», «սպառողական ընկերութիւնների մասին», «մեղւարուծութեան մասին», «փոխատու ընկերութիւն հիմնելու մասին», «հողի վերաբաժանման մասին», «պարտէզները խնամելու մասին», «ագ-

բար հարցի մասին», «գիւղատնտեսութեան անկումն և նրան բարձրացնելու միջոցները», «համայնական, տնական և ազարակային հողատիրութիւն և այլն»:

Սակայն որքան էլ օգտակար լինեն ընդհանուր ժողովները մասնագէտ գիւղատնտեսների մասնակցութեամբ, այնուամենայնիւ միքանի ընկերութիւններ դա բաւական չեն համարում գիւղում գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու համար և հարափրում են մասնագէտ ազգութեամբներին մշտագէտ ծառայելու ընկերութեան մէջ, իբրև գիտական քարտուղարներ, որպէս զի ընկերութեան անդամները ուղած ժամանակ կարողանան օգտական տեղեակ անձի խորհուրդներից և ցուցմունքներից:

Յաճախ հէնց այս րոպէն մի խորհուրդ, ցուցմունք է պէտք հողագործին, նաև ժամանակ չունի սպասելու ընդհանուր ժողովին, որտեղ տեղեակ անձնաւորութիւնը ներկայ կը լինի, որից և կարող է հարցնել. իսկ եթէ ընկերութիւնը ունի մշտական ազգութեամբ քարտուղար, ամեն ժամանակ կարելի է նրա ցուցմունքներին դիմել և նրանից ստանալ ցանկացած տեղեկութիւնը: Այդպիսի քարտուղարներ ունեն Պոլտաւայի և Սամարայի նահանգի մի քանի ընկերութիւնները:

Ուսումնական քարտուղարը մեծ նշանակութիւն ունի ընկերութեան համար: Մէկին նոր մեքենայ է պէտք, լաւ տեսակի վարսակ է պէտք, պէտք է արօտ ցանէ, միշտ կարող է նա խոր-

հուրդ հարցնել այդպիսի քարտուղարներից և տեղեկանալ, թէ ինչպէս պէտք է այդ անել: Նոր է գործը. անտեղեակը հեշտութեամբ կարող է սխալմունքի մէջ ընկնել և օգուտի փոխարէն վնաս ստանալ: Ընկերութեան իւրաքանչիւր անդամը կարող է հմուտ անձի հետ խորհրդակցել իր տնտեսութեան մասին. այդպիսի անձից էլ լսում է նա այն նորութիւնների մասին, որոնք ձեռնտուկերպով կարելի է անտեսութեան մէջ գործադրել, հէնց զրանից էլ խորհուրդ կը հարցնի ընկերութեան պահեստանոցից սերմ, պարարտանիւթ և այն գնելիս:

Առանց սխալւելու կարելի է ասել, որ ընկերութեան մէջ ուսումնական մարդը գիւղատնտեսական օգտակար, ձեռից ձեռ անցող զրգոյլ է, որը անզրագէտ գիւղացին էլ կարող է բանալ և նրա ցուցմունքներից օգտւիլ:

Ուստի ընկերութիւնները երբէք չպիտի ժլատութիւն անեն այդպիսի անձն հրաւիրելու գործում, մանաւանդ, երբ այդ բանին նպաստում է նաև գեմսուօն, ինչպէս, օրինակ, Պոլտաւայի նահանգում:

Բացի ժողովները, դասախոսութիւնները ու զրոյցները, զրեթէ բոլոր ընկերութիւնները ունեն նաև գիւղատնտեսական գրքերի զրագարան, որից կարող են օգտւիլ ընկերութեան անդամները, ընկերութիւններից մի քանիսը ընթերցարաններ ել ունեն և գիւղատնտեսական թերթեր ու լրագրներ են բերել տալիս: Կան ընկերութիւններ,



ինչպէս օրինակ Ալեքսէկի ընկերութիւնը, որոնք գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու նպատակով գիւղերում այդ առարկայի վերաբերեալ գրքեր են տարածում:

Լոկ զրոյցներն ու ընթերցումները դեռ շատ քիչ են գիւղական հողագործին համոզելու, թէ այս կամ այն նորմուծութիւնը օգտակար է. նա չի հաւատում լաւ պատմւածքների, եթէ նոյն իսկ իր ընկեր—գիւղացին է պատմողը. պէտք է որ գնելուց առաջ յանձնարարւած գործիքով նախապէս փորձ կատարի և տեսնեի արդիւնքը: Այդ պատճառով էլ ընկերութիւններից մի քանիսը զանազան երկրագործական գործիքների փորձեր և մրցակցութիւններ են սարգում:

Բոլոր գութանները, կասելամեքենաներն և այլ գործիքները հաւասարապէս լաւ չեն. վերցնենք, օրինակ, այն վայրերը, որտեղ գործում է ընկերութիւնը. մի քանիսը աւելի յարմար են այդտեղի տնտեսութեան համար, միւսները պակաս կամ բոլորովին անյարմար: Փորձերին դժւար չէ այդ տեսնել և ընտրել լաւերն ու աւելի յարմարները

Աւելի մեծ նշանակութիւն ունեն գիւղատնտեսական ցուցահանդէսները, որոնք կազմակերպում են ներկայումս բազմաթիւ ընկերութիւնների ձեռքով զեմստոների և երկրագործութեան գեպարտամենտի աջակցութեամբ, որոնք թէ փողով են նպաստում և թէ գիւղատնտեսական լաւագոյն առարկաների մրցանակաբաշ-

խութեան համար ՀՀ Հայաներ 7/1. 1922  
ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԱԾՈՒՅԹԻ ՀԱՅԱՀԱՆԴԱԳՈՐԾՎԱԿԱՆ  
այն բոլորի հետ, ինչ որ լաւագոյններ միւսների տնտեսութեան մէջ: Այստեղ միմեանցից սովորելու և ուրիշի տնտեսութեան լաւ կողմերը փոխառելու շատ բան կայ:

Ցուցադրուած առարկաններից լաւագոյնները վարձագրուում են փողով և մեղաներով, ըրը տէրերի մէջ մրցակցութիւն է առաջ բերում և հետաքրքրութիւն զարթեցնում գէպի տնտեսավարութեան աւելի լաւ միջոցները, լաւատեսակ տաւարաբուծութիւնն և աւելի լաւ գործիքների (գարբնական, փականագործական և ատաղձագործական և այլն) արտադրութիւնը:

Ցուցահանդէսներին յաճախ քննում են գործիքներն ու մեքենանները, գիւղատնտեսութեան մասին գասախօսութիւններ են կարգացւում, ցուցական աշխատանքներ են կատարում մեղաբուծութիւնից, կաթնատնտեսութիւնից և այլն:

Այդպիսի ցուցահանդէսների շատ օրինակներ կարելի է մատնանշել:

Այսպէս, շատ յաջող ցուցահանդէս է սարքել հսակվիճի գիւղատնտեսական ընկերութիւնը, որտեղ 235 հոգի (գրանցից 174 գիւղացի) ցուցադրել են գիւղատնտեսական 2145 զանազան առարկաներ (տաւար, մեքենաներ, հացահատիկ և այլն): Ցուցահանդէսը այցելել է մօտ 8000 հոգի: Ազգաբնակութիւնը շատ օգտակար է գտել

3 | 8  
0 | 0  
— | —

ցուցահանդէսը և ընկերութիւնը ցուցահանդէսների համար մշտական շէնքեր է կառուցել ապագայում ևս կրկնելու նպատակով։

Կապուտինի գիւղատնտեսական ընկերութիւնը 1907 թ. հոկտեմբերի 1-ին անամսաբուժութեան ցուցահանդէս սարքեց, որին ներկայացւած էր 65 ձի, 35 զլուխ եղջիւրաւոր անասուն, 54 ոչխար, 23 խոզ և 60 բնից աւել տնային բարելաւած թուչուն։ Ցուցահանդէսը կենդանիների յատկութեան տեսակակէտից յաջող գուրս եկաւ, շատերը պարզեներ ստացան։ շատ մեղաներ, գովութեան թղթեր են բաշխւել և 235 ր. նւէր փողով։

Եւ այդպէս զրեթէ ամենուրեք։

Գիւղատնտեսական ընկերութիւնների գլխաւոր նպատակն է հողամշակութեան ձևերը և տնաեսավարութեան միջոցները բարւոքել, այս կամ այն ճանապարհով ձգտել, որ «երկու հասկածի այնտեղ, որտեղ առաջ մէկն էր աճում»։

Սակայն նախ քան գիւղացուն հողամշակութեան նոր ձեւեր, հացահատկի նոր նոր տեսակներ, կերի խոտեր առաջարկելը, պէտք է փորձել և տեսնել, թէ դրանք ո՞րքան պէտքական են այդ տեղի համար։ Բայց յաճախ այն բարելաւածթիւնն էլ, որի օգտագործութիւնը արդէն ակնյայնի է, արմատ չի բռնում գիւղացու տնտեսութեան մէջ և միայն այն պատճառով, որ ոչ ոք չի վստահանում առաջինը գործադրել։ Մէկն ու մէկը սեփական օրինակով պէտք է ցոյց տայ

նրա ամբողջ ձեռնտւութիւնն ու օգտագործութիւնը, այն ժամանակ այդ գործին հետեւողներ շատ կլինեն։

Ընկերութիւնը այդ բանում էլ կարող է օգնութեան գալ գիւղացու տնտեսութեան։

Ներկայումս արդէն ընկերութիւններից շատերը փորձնական և ցուցական արտեր են սարքում։ Այդ նպատակով ընկերութիւններից մի քանիսը հող են գնում, միւսները երկարատև կապալով են վերցնում։ դրան քիչ հող է պէտք, ընդամենը 3—5 գեսեատին

Փորձնական գաշտի վրայ փորձում են հողամշակութեան այն բոլոր նոր միջոցները, որոնք այս կամ այն պատճառով հետաքրքրական են տեղական գիւղացու համար։

Հենց այդ գաշտերումն էլ ցոյց են տրւում տնաեսավարութեան այնպիսի ձևեր, որոնց ներմուծումը ակնյայտօքն օգտագործելու հողամշակերին, սակայն ոչոք չի վստահանում առաջինը փորձել։

Տաւարի կերի կարիքը Թուսաստամի այլ տեղերի գիւղացիներին ևս ստիպում է հին տընտեսավարութիւններից հրաժարւելու և նորը մտցնելու։ Մնում է միայն իւրաքանչիւր վայրի համար ամենալաւ ցանքսափոխութիւն մտցնել։ հենց այդ աշխատանքն է, որ իրանց վրայ են վերցնում գիւղատնտեսական ընկերութիւնները։

Իրանց ցուցական գաշտերում նրանք սովորաբար մտցնում են այն ցանքսափոխութիւնը

(4—6—8 ամեայ), որը ամենայարմարն է համարւում եռամեան փոխարինելու:

Բացի փորձնական և ցուցական արտերը, ընկերութիւններից մի քանիսը, օրինակելի տընտեսութիւններ կամ ֆերմաններ են սարգում:

Գիւղացիք տեսնելով իրանց ընկերութեան այդ ձեռնարկութիւնները, հետզետէ համոզւում են, թէ հսարաւոր են այն նորմուծութիւնները, որոնք մինչև այդ իրանց կողմից դատապարտւում էին. Նրանք սկսում են իրանց տնտեսութեան մէջ ևս գործադրել այդ նորմուծութիւնները:

Սրանք են ահա գիւղատնտեսական ընկերութիւնների գլխաւորագոյն խնդիրներն ու ձեռնարկութիւնները գիւղացիների շրջանում գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու գործում:

Սակայն կան այնպիսի ընկերութիւններ էն, որոնք դրանով չեն սահմանափակւում, այլ աւելի խոշոր նպատակների են ձգտում:

Այդպէս, օրինակ Ալեքսեևի, Ժաբլովի և այլ գիւղատնտեսական ընկերութիւնները ջուղհականոցներ են հիմնել գիւղացի աղջիկներին ոստայնագործութեան աւելի շահաւէտ միջոցները սովորեցնելու: Կան ընկերութիւններ, որոնք դարբնոցներ, այլ և այլ արհեստանոցներ են հիմնել գիւղական տղաներին արհեստներ սովորեցնելու համար:

Բ. Գիւղատնտեսական լնկերութիւնների այլ ձեռնարկութիւնները գիւղացիական տնտեսութիւնը բարւսինու նորանկով:

Գիւղատնտեսական լնկերութիւնները, բացի գիւղացիութեան մէջ ամեն միջոցներով գիւղատնտեսական գիտելիքներ տարածելը, գործ են դնում ամեն միջոց իրանց անդամների տնտեսութիւնը բարւոքելու համար:

Մենք արդէն յիշատակել ենք, որ գիւղացիութիւնը վերջին տարիներս աւելի ու աւելի է հետաքրքրւում կերի համար խոտեր, արօտներ և արմտիք ցանելու հարցով:

Սակայն գիւղացիներից քչերն են իմանում, թէ որտեղից պէտք է գնել առևոյտի կամ ճակնդեղի սերմ:

Շատ անգամ պատահում է, որ արօտ ցանել ցանկացողը յետ է կենում իր գիտաւորութիւնից, շնորիւ նրա սերմերի թանկութեան, հողագործը չի վստահանում մեծագումար ծախսեր անել արօտացանութեան վերայ, շիմանալով, թէ դրանից ինչ գուրս կըգայ:

Գիւղատնտեսական լնկերութիւնները այդպիսի դէպքերում էլ օգնութեան են գալիս:

Երկրագործութեան դեպարտամենտի կամ զեմստովոյի տւած նպաստով նրանք մեծ քանակութեամբ գնում են այդ աւելի համար ամենաշահաւէտ արօտների կամ արմտիքի սերմեր և կամ ձրի են բաժանում, կամ կէս գնով վաճառում

կերի բոյս ցանելու փորձել ցանկացողներին։  
Սերմերի հետ տրւում են նաև այդ բոյսերը ցանելու վերաբերեալ հրահանգներ։

Այդ բոլորը կատարւում է կերի բոյսեր տարածելու նպատակով, որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ տեսնի իր ցանած կերաբոյսի շահաւէտութիւնը, երկիւղ չի կրի երկրորդ անգամ փողով էլ սերմ գնելու։ Այդ սերմերը վաճառւում են սովորաբար նաև գիւղատնտեսական ընկերութիւնների պահեստանոցներում, որոնք ընկերութեան անդամներին այդ գործում ևս թեթևութիւն տալու համար վճարը մասմաս ստանալու պայմանով են վաճառում։

Գիւղատնտեսական ընկերութիւնները ձրիաբար հանքային պարարտանիւթեր բաժանելով, ազգաբնակութիւնը վարժեցնում են այդ տեսակ պարարտանիւթերի գործադրութեան։

Դժւար է գիւղացուն համոզելը, որ ցանքսից առաջ հողի վրայ ինչ որ փոշի ցանելով, նա իւրաքանչիւր գեսեատինին 15—20 և աւելի փուդշատ կատ կատանայ, քան առանց այդ փոշին ցանելա։ Միայն ձրիաբար ստանալով, այն էլ երբեմն յորդորանքներից յետոյ, գիւղացին վատահանում է իր տնտեսութեան մէջ գործադրելու։ սակայն դրա շահաւէտութիւնը տեսնելով, միւս անգամին նրա համար փող ևս կըծախսէ։

Գիւղացու տնտեսութեան մէջ մեծ նշանակութիւն ունի լաւ տաւարը, լինի դա աշխատա-

ւոր ձին թէ ոչխարը, լաւ տաւարը միշտ աւելի լաւ է վարձատրում (աշխատանքով, մսով, կաթով, ձարպով, բրդով ևայլն) իր ստացած կերը, քան վատը։ Ուստի և բոլոր գիւղատնտեսական ընկերութիւնները այս կամ այն ընտիր կենդանիներն են պահում, որոնցից սերած գիւղացու տաւարը բարելաւում է։

Գիւղացիների թոչնաբուծութիւնը բարուքելու գործում լուրջ արդիւնքների հասաւ Բեշեափիովի գիւղատնտեսական ընկերութիւնը։ Յիշեալ պարապմունքը ներկայումս ահազին նշանակութիւն է ստանում գիւղացու տնտեսութեան մէջ։ Վերջին տարին Ռուսաստանից արտասահման է արտահանւած մօտ 70 միլիոն ըուբլու միայն։

Հասկանալի է, թէ որքան ձուառատ է հաւի տեսակը, այնքան շահաւէտ է նա։ նոյն նշանակութիւնը ունի լաւացեղութիւնը ուտելու թրոշունի վաճառման մէջ։ ընտիր թոչունը յաճախ հասարակից երկու անգամ ծանր է, միաը աւելի համեղ, ուստի և աւելի թանկ է գնահատում

Բեշեափիովի ընկերութեան գործած վայրում։ հասարակ թոչուն համարեա չի գտնուի։ այդ ընկերութիւնը այնքան կանոնաւոր հիմքերի վրայ է զրել թոչնաբուծութեան բարւոքումը, որ Մուկայում կայացած մի ցուցահանդէսում Բեշեափիովի գիւղացիք թոչունի համար մէծ պարզեներ ստացան։ հաւերի մի քանի բոյներ 60-ական ըուբլի են գնահատել, հաւի մի բոյնի 10—15

ըուբլով վաճառելը սովորական երևյթ է:

Մենք այլ ևս չենք թւի գիւղատնտեսական ընկերութիւնների ձեռնարկած միւս բոլոր միջոցները գիւղացու տնտեսութիւնը բարւոքելու նպատակով։ Այդ միջոցները շատ բազմատեսակ են և յաճախ տեղական պայմաններից են կախւած։ որտեղ ինչը աւելի կարեոր է, դրան էլ ամենից առաջ պիտի ձեռնարկէ ընկերութիւնը։

Գ. Գիւղատնտեսական պահեստարաններ, մեթենաների վարձով տալի, հատկագիշ վայրեր, մատչելի փոխաւորեան կազմակերպումն եւ այլ ձեռնարկութիւններ։

Որքան էլ օգտակար լինեն գիւղատնտեսական ընկերութիւնների վերև նկարագրած ձեռնարկութիւնները, այնուամենայնիւ դրանք անբաւար են գիւղացու տնտեսութիւնը բարւոքելու համար։ Դեռ քիչ է իմանալը, թէ գութանով հերկելը աւելի ձեռնտու է, քան արօրով, որ լաւ սերմնացու ցանելը և հանքային պարարտանիթեր գործածելը հացի բերբութիւնը բարձրացնում են, որ լաւ տաւարը վատից աւելի է ձեռնտու և այլն։

Դրանք չեն օգնի գիւղացուն, եթէ նա չի իմանում, թէ որտեղից կարելի է գնել էժան գութան, հանքային պարարտանիթ կամ ցանքսի համար լաւորակ սերմնացու, որ չխարւի, այսինքն ձեռնտու գնով լաւատեսակ ատլանք ձեռք բերի. եթէ ոչ՝ յաճախ երեք անգամ աւելի գնով մասնաւոր վաճառականից գնում է անքե-

դուն սերմնացու կամ պարարտանիթի վոխարէն ինչ որ անպէտք խառնուրդ և սպասած արդիւնքի փոխարէն վնաս կրելով, երկար ժամանակ հակականք է զգում գէպի ամեն մի «նորմուծութիւն»։

Եթէ գաւառական մի քաղաքում գեմատօյական պահեստարան լինի էլ, որտեղից այդ բուրը կարելի է ձեռք բերել, յաճախ դրա համար կարիք է լինում 50 և աւելի վերստ գնալու։

Այն ինչ, որպէսզի գութանները, շարքով ցանելու մեքենաները, պարարտանիթերը ևայլն արագօրէն պատւաստեն գիւղացու տնտեսութեան մէջ, պէտք է, որ դրանք միշտ ձեռի տակ լինեն և գիւղացու աչքը ծակեն, որպէսզի նա, արօտի կամ վարակի մասին լսելով, միշտ կարողանայ մօտ տեղից և ձեռնտու պայմաններով գնել դրանց սերմերը իր տնտեսութեան համար։ Նոյնպէս կարեոր է, որ այդ բոլորը գնելով, նա համոզւած լինի, որ լաւորակ ապրանք ձեռք կը բերի, այսինքն բեղուն սերմնացու, լաւ գութան ևայլն։

Միայն այն ժամանակ բարւոքումները հեշտութեամբ կըտարածւեն։

Ուստի գիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութեան գլխաւոր նպատակներից մէկն է՝ հիմնել պահեստաններ երկրագործական մեքենաների և գործիքննրի, լաւատեսակ սերմնացվի, կերի և բանջարանոցի բոյսերի, հանքային պարարտանիթի, մեղւաբուծութեան պիտոյքների, պաղատու ծառատունկերի և տնտեսական այլ

պարագաների:

Գիւղատնտեսական ընկերութիւնները հէնց այդպիսի պահեստարան հիմնելով են սկսում սովորաբար իրանց գործունէութիւնը. այն ժամանակ ընկերութեան տւած օգուտը շատ շռտով ակնայայտնի է դառնում գիւղացիների համար և նախկին ևեթ շրջանում վստահութիւն է գրաւում, իբրև օգտակար գործ:

Գիւղատնտեսական ընկերութիւնների պահեստարանները իրանց անդամներին կրկնակի օգուտ են բերում:

Մի կողմից, նրանց չնորհիւ գիւղում արագօրէն տարածում են լաւատեսակ գործիքներ, սերմնատուններ և այլն. լսելով նոր գութանի կամ ցանիչ մեքենայի օգտատիմասին, իւրաքանչիւր հողատէր կարող է պահեստարան գնալ, լաւ գննել, զինը իմանալ, հէնց այստեղ տեղեկանալ ընկերութեան քարտուղարից. կամ պահեստարանի կառավարչից թէ ինչպէս պէտք է գործածել նոր գործիքը և որքան օգտակար կարող է լինել դա իր տնտեսութեան համար, հէնց այդտեղ էլ կարող է նա փորձել. դրանից յետոյ նա դժւարութիւն չի կրի որոշելու, թէ մեքենան գնի թէ չգնի:

Իսկ մի ուրիշը պատահաբար մտնում է պահեստարան, որտեղ նրա աշքովն է ընկնում մինչև այդ իր չտեսած մի մեքենայ կամ արօտի սերմնացու, քարտուղարից կամ միւս այցելուներից հարց ու փորձ անելով, նա տեղեկանում է դրանց օգտակարութեան մասին և ա-

ունց երկար բարակ տատանւելու գնում է:

Միւս կողմից պահեստարանների օգուտն այն է, որ այդտեղ գիւղացին աւելի լաւ աղբանք է գնում և աւելի էժան գնով քան մասնաւոր վաճառականներից:

Պահեստարանը միմիայն փորձւած ապրանք է ծախում՝ ցանքի սերմնացուն անպայման բեղումն է լինում, գութանները, ցանելու և այլ մեքենաները այդ տեղի համար ամենայարմարները:

Բացի այդ, ընկերութիւնը միշտ կարող է մասնաւոր վաճառականներից աւելի էժան ծախել, որովհետեւ մեծ զիջումով ( $20\%$ — $30\%$ ) ձեռք բերելով ապրանքը, նա շահի հետամուտ չի լինում, ուստի և իր գնից շատ քիչ աւելի է ծախում, որպէսզի պահեստարանի պահպանութեան ծախսը դուրս գալով, մի փոքր օգուտ միայն ստանայ ապագայի համար:

Մեծ տարբերութիւն կայ, թէ ամեն մէկը իր տնտեսութան համար 1—2 առարկայ առանձին է գնում, թէ գումարով, մեծաքանակ, ինչպէս գիւղատնտեսական ընկերութիւններն են անում, 100—200 հատ. Այդ պատճառով էլ գիւղատնտեսական ընկերութիւնները վաճառատներամ կամ ձուլարաններամ (զաւոգներում) ապրանք գնելիս  $10\%$ -ից մինչև  $30\%$  զիջում են վայելում և այդպիսով հնարաւորութիւն են ունենում ապրանքը իրանց անդամներին էժան ծախելու:



Յաճախ հասարակական պահեստատունը  
հիմնելուց յետոյ վաճառականների մօտ առաջ  
19—20 րուբ. արժող գութանը գիւղատնտեսա-  
կան ընկերութիւնը 14—15 րուբ. է ծախում, եր-  
կաթի պուղը 1 լ. 80 կ. փոխարէն 1 լ. 50 կ.  
և այլն:

Բացի այդ, պահեստատունը մասնաւոր վա-  
ճառականներին ևս ստիպում է աւելի էժան ծա-  
խելու, այլապէս ոչոք նրանցից ապրանք չէր գնի:

Այդպէս կարողի գիւղատնտեսական ընկերու-  
թիւնը, փայտեղէնի պահեստարան հիմնելով, մաս-  
նաւոր փայտավաճառներին ստիպեց փայտի գի-  
նը 10—15<sup>0</sup> իշեցնել, իսկ դրա զնհորիւ մի ամ-  
բողջ շրջանի ազգաբնակութիւնը մէկ երկու հա-  
զար րուբ. շահեց:

Գիւղատնտեսական ընկերութիւնները յաճախ  
գինը մաս-մաս ստանալու պայմանով են ծախում  
երկրագործական պիտոյքները իրենց անդամնե-  
րին: Հողագործը միշտ հօ ազատ գումար չի ու-  
նենում իր ձեռին. ամենից յաճախ չի ունենում  
յատկապէս հէնց այն ժամանակ, երբ պէտք է  
ցանքսի, հունձի և կալի ժամանակ. ուստի գիւ-  
ղատնտեսական ընկերութիւնները ապրանքը բա-  
րեյոյս (վարկունակ՝ նիւթապէս վստահելի) ան-  
դամներին ծախում են սովորաբար տարեկան  
6—8 րուբլով, երբեմն էլ առանց տոկոսի մաս—  
մաս ստանալու պայմանով:

Սակայն բոլոր ընկերութիւնները չեն կա-  
րող այդպէս վարւել, այլ նրանք, որոնք կամ մեծ

դրամագլուխ ունեն շրջանառութեան մէջ և  
կամ իրանց ապրանքը վաճառատնելից պարտ  
են վերցնում: Ընկերութիւններից շատերը նիւ-  
թական սուղ դրութեան մէջ են գտնուում, ուստի  
և շատ չեն կարող պարագով ծախել:

Այդ պատճառով էլ նրանք սովորաբար հոգս  
են քաշում գիւղում վարկատու ընկերութիւններ  
հիմնելու, այսինքն այնպիսի ընկերութիւններ,  
որտեղ դրանց իւրաքանչիւր անդամը գութան,  
սերմացու գնելու կամ տնտեսութեան այլ կարիքի  
համար կարող է ժամանակաւորապէս իրան ան-  
հրաժեշտ գումարը փոխառնել փոքր տոկոսով:

Բայց ամեն մի գիւղացի հնար չի ունենայ  
իր փոքր տնտեսութեան համար գործիք գնելու,  
այնպիսի գործիք, ինչպէս ցանող, հնձող կամ կալ-  
սող մեքենան է: 3—4 դեսետինանոց անտե-  
սութեան համար այդպիսի շարքով ցանող կամ  
գտելու մեքենայ գնելը ձեռնտու չէ. այն ինչ  
զտած սերմացուն շարքով ցանելը փոքր տնտե-  
սութեան համար ևս նոյնքան շահաւէտ է, որ-  
քան և մեծի. դրանց մէջ զանազանութիւն չկայ.  
պէտք է միայն այնպէս անել, որ օգտակար,  
բայց թանկ մեքենաները փոքր, 3—4 դեսե-  
տինանոց անտեսութեան համար ևս մատչելի  
լինեն:

Հէնց այդ էլ անում են գիւղատնտեսական  
ընկերութիւնները: Այդ բոլոր մեքենաները նրանք  
հասարակական հաշւով են գնում, իսկ յետոյ  
որոշ վճարով (օրավճարով կամ աշխատանքի չա-

փով) տալիս են կարիքաւոր անդամներին:

Կարելի է առանց սխալելու ասել, որ Ռուսաստանի շատ վայրերում շարքով ցանող մեքենաների գործածութիւնը կամ սերմացուի ջոկումը թանկագին զափչներով մինչև այժմ անմատչելի կը մնային գիւղացու անտեսութեան, եթէ չգործէին գիւղատնտեսական ընկերութիւնները:

Լաւ մաքրած և գտած սերմնացու ցանելը արդէն մեծ գործ է անտեսութեան համար, որովհետեւ դրանից բերքը  $20-30^{\circ}/\text{o}$  աւել է լինում, քան գիւղացու սովորական չմաքրած սերմնացուն ցանելիս: Ուստի գիւղատնտեսական ընկերութիւններից շատերը հասկացել են լաւ սերմնացուի ահագին նշանակութիւնը և թանկագին զափչներ են պահում ընկերութեան բոլոր ցանկացող անդամների սերմնացուն մաքրելու համար:

Կապուստինի ընկերութիւնը 1906 թ. երեք որոշակիչով գիւղացիների համար մաքրել և գտել է  $20$  հազար պուդ սերմնացու: Սերմնացու գտելու համար ընկերութիւնները զանազան վարձ են ստանում կէսից մինչև մէկ և կէս կոպէկ մաքրած սերմնացուի պդից:

Ընկերութիւններից ոմանք մեքենաները մի որոշ տեղ են պահում, ոմանք էլ, ինչպէս օրինակ Լոխիցկի և Պոլտաւայի գաւառների գիւղատնտեսական ընկերութիւնները, մեքենաները մարդկանց հետ ուղարկում են գիւղից գիւղ և ցանկացողների հացահատիկը մաքրում որոշ վճարով.

Համարեան նոյն հիմունքներով են տալիս գիւղատնտեսական ընկերութիւնները նաև միւս մեքենաները: Ընկերութիւններից մի քանիսը իրանց անդամներին վարձով տալու նպատակով ձեռք են բերում կարող և հնձող մեքենաներ:

Ճատ յաճախ սերմնագոտիչ մեքենաներից յետոյ շարքով ցանող մեքենաներ են գնում: Պոլտաւայի նահանգի գրեթէ բոլոր գիւղատնտեսական ընկերութիւնները շարքով ցանող մեքենաներ ունեն որոշ վարձով ցանկացողին տալու համար՝ օրավճարով  $1-1^{1/2}$  ր. օրական կամ գեսեատինի հաշւով ցանած ամեն մի դեսեատինին  $30-50$  կոպ.:

Շարացանքսը աւելիքիչ սերմնացու պահանջելով ( $15-20^{\circ}/\text{o}$ ), միւնոյն ժամանակ աւելի է բարձրացնում բերքը, համեմատած ցրւած և մանաւանդ ձեռով ցանածի հետ: Շարքով ցանող մեքենաները վարձով տալով, գիւղատնտեսական ընկերութիւնները իրանց անդամներին հնարաւորաթիւն են տալիս օգտելու շարացանքսի բոլոր առաւելութիւններով առանց ծախսի, բացի աշխատանքի փոքրիկ վարձը:

Մի քանի ընկերութիւններ աւելի հեռուն են գնում, կազմակերպելով ընդհանուր գործածութեան համար սեփական փոքր ջրաղացներ, փոքրիկ ձիթահանքեր և այլն:

Դեռ նորեք բացւած Տիչինի գիւղատնտեսական ընկերութիւնը վճուեց հասարակական կաթնատուն և խնոցահարութիւն կազմակերպել, նիւթ-

թական միջոցների պակասելը արգելք չեղաւ. ընկերութեան գործին բոլոր համակրողները 5—10 րուբ. բաժնէգրութեամբ, սկզբում մօտ 200 րուբի հաւաքելով, գնեցին խնոցահարութեան անհրաժեշտ պիտոյքները և գործը սկսեցին. Ազգաբնակութիւնը դրա օգուտը տեսնելով, ընդհանուր գործը բաժնէգրութեամբ ապահովեց, միջոցները աւելանալով, խնոցահար վարձեցին: Ներկայումս արդէն գործը այնքան լաւ է ընթանում, որ աեղական առնողներն ու ծախողները ոտքի ելան և բոլոր միջոցների դիմեցին գիւղատնտեսական ընկերութեան օգտակար ձեռնարկութիւնը խանգարելուհամար. սակայն այդ չյաջողւեց նրանց:

Վերջապէս չի կարելի գիւղատնտեսական ընկերութիւնների մի այլ կարևոր ձեռնարկութիւնը՝ հողը միագումար կապալով վերցնելը չմատնանշել:

1903թ. Խարկովի գիւղատնտեսական ընկերութիւնը հարևան կալւածատէրից 248 դեսետին հող վերցրեց կապալով մի դեսետինը  $10^{1/2}$  րուբով և 6 տարի ժամանակով. Հասկանալի է, որ միագումար 248 դեսետին հող վերցնելը միշտ աւելի էժան է նստում և ձեռնտու է, քան ամեն մէկի առանձին մի մի դեսետին վերցնելը:

Փոխառու ընկերութեան միջոցով գիւղատնտեսական ընկերութիւնը դեսետիններով բաժանում էր ամբողջ հողը իր անդամներին կա-

պալով, սահմանելով կանոնաւոր յանքսափոխութիւն արօտացանութեամբ: Այդպիսով ընկերութիւնը երկու նպատակի հասաւ, մի կողմից նա իր անդամներին հնարաւորութիւն տւեց հողը աւելի էժան վարձել, քան իրանք կրվածէին, միւս կողմից բարեկաւած սերմնափոխութիւն սահմանելով վարժեցնում է նրանց ննի փոխարէն աւելի նոր անտեսութեան:

Գիւղատնտեսական ընկերութիւնները, չսահմանափակւելով պահեստարաններ հիմնելով գիւղատնտեսական մեքենաների, գործիքների, սերմնացուների, պարարտանիւթերի և անտեսական այլ պիտոյքների համար, հոգս են քաշում գիւղացու գնած բոլոր ապրանքների գինը իջեցնելու:

Գիւղացին շատ թանկ է տալիս, գերգճարում է անային այնպիսի պիտոյքների համար, ինչպիսիքն են՝ նաւթը, աղը, երկաթեայ գործքերը, հագուստը, անային այլ և այլ իրերն և այն:

Գիւղատնտեսական ընկերութիւնները, կամենալով տեղական աղգարնակութեան կովէկները անտեսել առուծախսի ժամանակ, գիւղատնտեսական պահեստարաններից զատ երեմն սպառողական մանրավաճառ կրպակներ էլ են հիմնում:

Իսկ եթէ ընկերութիւնը իր հաշւով չի բաց անում այդպիսի կրպակներ, այդ գէսքում յաճախ գիւղացու պիտոյքների բոլոր ապրանքների գինը իջեցնելու համար գիւղում սպառողական ընկերութիւն հիմնելու նախաձեռնութիւնն իր

վրայ է վերցնում:

Ե. Գիւղացու տնտեսութեան բերերի շահաւաք վաճառ-  
ման կազմակերպումը:

Եթէ գիւղատնաեսական ընկերութիւնները  
գիւղացուն հնարաւորութիւն են տալիս երկրա-  
գործական մեքենաներն ու իրան անհրաժեշտ այլ  
առարկաները էժան գնով ձեռք բերելու, նրանք  
աւելի ևս մեծ օգուտ կը բերեն գիւղացուն,  
վերջնիս տնտեսութեան բերքերի վաճառումը  
կանոնաւոր հիմքերի վրայ գնելով.

Դեռ բաւական չէ մէկին սովորեցնել առաջ-  
ւանից աւել բերք ստանալը կամ լաւատեսակ  
տաւար, թուչուն կային բուծելը. պէտք է հոգ տանել  
նաև այդ բոլորը լաւ գնով վաճառել տալու և  
ոչ թէ չնչին գնով տալու, ինչպէս որ այդ տեղի  
էր ունենում մինչև այժմ:

Չէ որ գիւղացու տնտեսութեան գրէթէ ամ-  
բողջ արտադրութիւնը՝ հաց, տաւար, թուչուն և  
այլն ծախում է հանում:

Արդէն անցնում են հին ժամանակները,  
երբ գիւղացին իրան և իր ընտանիքի համար  
ոչինչ չէր գնում (ամեն ինչ, նոյն իսկ շորն տ-  
ոտնամանը ինքն էր պատրաստում), հիմա գիւ-  
ղացին անային համարեա բոլոր պիտոյքները գնում  
է, իսկ իր տնտեսութեան բերքերի մեծ մասը  
վաճառքի է հանում:

Եւ եթէ նա շատ գերվճարում է (աւել է  
տալիս) անհրաժեշտ իրերը գնելիս, աւելի ևս մեծ

վնաս է կրում իր բերքերը վաճառելիս:

Հազիւթէ իր բերքերը Ռուսաստանի գիւղացուց  
աւելի էժան վաճառող գտնւի. նա ստիպւած է  
շահ տալ անհամար միջնորդներին, որոնք էժա-  
նագին գնում են ինչ որ կարելի է, ծախում մեծ  
շահով:

Մի ֆրանսիացի հեղինակ գիւղի առևտրա-  
կան շրջանառութիւնը իր տեսած «հրաշիջային  
(պոժարնի) շղթայի» հետ է համեմատում. «հրդէնը  
հանգցնելիս, 10—15 մարդ շարքով կանգնած, ջորվ  
լցրած գոյլը ձեռից ձեռ են տալիս. ամեն ան-  
գամ գոյլը մէկից միւսին անցնելիս, միջի ջուրը  
քիչ ճղփում-թափուում է և երբ համում է վեր-  
ջին հրդէնաշէջին, որը պէտք է ջուրը կրակի վե-  
րայ ածի, գոյլը արդէն գրէթէ դատարկ է լինում»:

Այսպէս էլ արտասահմանում ոռւսական հա-  
յի, կանեփի կամ ձեփ համար գնողի վճարած փո-  
ղերը ամբողջապէս չեն համում այդ բերքերը  
իր անտեսութեան մէջ արտադրող գիւղացուն:  
Նրանց մեծ մասը հալում է ճանապարհին զա-  
նազան առնողների և միջնորդների գրպահնե-  
րում:

Դժւար է երեւակայել, թէ ինչ ահագին վնաս-  
ներ է կրում գիւղացիութիւնը շնորհիւ այն  
հանգամանքի, որ նրա տնտեսութիւնից ստաց-  
ւած բոլոր բերքերը իրանց իսկական գնից շատ  
էժան են ծախում: Վերջնենք օրինակի համար  
հաւածի վաճառքը:

Դանիայում ձու վաճառելու գործը դեկա-

վարում են գիւղաճնտեսական ընկերութիւններ, որոնք իրանց հերթին միանալով, կազմել են ձու վաճառելու մի ընդհանուր միութիւն։ Շնորհիւ այն հանգամանքի, որ ընկերութիւնները ծախող ձեփ յատկութեան վրայ հսկողութիւն են սահմանել, գնողը (մեծ մասամբ անգլիացի) միշտ վստահ կարող է լինել, որ իր գնած ձուն լիք է և թարմ, ուստի և լաւ գին է տալիս, որը համարեա ամբողջապէս գիւղացու գրպանն է հասնում։

Սակայն հէնց նոյն անգլիացին չի կարող համոզւած լինել, որ Ռուսաստանում կարող է թարմ ձու ձեռք բերել, որովհետեւ առնողներն և միջնորդները հոգս չեն քաշում գնած և վաճառքի հանւելիք ձեփ յատկութեան մասին։ Նրանց միակ հոգաը էժան գնելն է։

Այդ պատճառով էլ 1903 թ. Անգլիայի շուկաներում Ռուսաստանի ձեփ տասնեւակին 21 կ. էին տալիս, մինչ Դանիայի ընկերութեան արտահանածի տասնեւակին՝ 34 կոպէկ։

Եթէ հաշւենք, որ Ռուսաստանի սահմաններով օրական մօտ 8 միլիոն ձու է արտահանւում, այն ժամանակ հատի գինը միայն մի կոպէկ պակասելիս օրական 80 հազար ըուբ. կամ տարեկան 30 միլիոն ըուբ. պակասորդ դուրս կըդայ։

Սակայն ծախսած ձեփ համար Ռուսաստանի ստացած տարեկան 60 միլիոն ըուբ. 20 միլիոնը եթէ ոչ աւել, անշուշտ զանազան միջնորդների գրպանումն է հալչում։

Հիմա կարելի է երեակայել, թէ որքան կուրուստ է կրում Ռուսաստանի գիւղացին հացահատիկ կամ մի այլ բերք վաճառելիս։

Մեզանից ով չի տեսել աշնանը համարեա ամեն մի քաղաք կամ խոշոր գիւղ ձրգւած գիւղացու հացահատիկով լի կառքերի անվերջ շարանը։

Գիւղացին, հազիւ բերքի մի մասը կալսած, շտապում է վաճառելու, որովհետեւ կարիքն է ստիպում, նա հնար չունի նստել լաւ գնի սպասելու. նա վերցնում է այնքան, որքան տալիս է գնողը իսկ նա սովորաբար տալիս է քէֆը ուզածին չափ։ Գիւղացին շատ լաւ գիտի, որ իսքը գարնանը գուցէ մէկ և կէս անգամ աւելի գնով պիտի գնէ հացահատիկը, քան ծախել է։ Բայց դա անօգուտ է. միենոյն է պէտք է ծախէ, անհրաժեշտ է, դանակը ոսկոռին է հասել։

Գիւղատնտեսական ընկերութիւններից շատերը այդ բանի վրայ ուշադրութիւն են դարձրել և ցորենը ամբարում են, որ աշնան գինը բարձրացնեն։ Նրանք յաճախ միջնորդ-առնողներից 5—10 կոպ. աւել տալով, վերջիններին էլ ստիպում են աւել վճարելու։

Իսկ եթէ ընկերութեանը յաջողուի հացահատիկը շահաւել գնով վաճառելու, այն ժամանակ նա օգուտի մի մասը վերադարձնում է իրան՝ հացահատիկը վաճառող գիւղացուն, իսկ միւս մասը թողնում է ընկերութեան գործի կազմակերպման ծախսերը (գործակատարի, ամբարի շէնքի

և այլն) ծածկելու համար:

Իսկ գիւղատնտեսական ընկերութիւնը հացը միշտ աւելի ձեռնառւ գնով կարող է ծախել, քան առանձին հողատէրը, որովհետեւ մեծ զանազանութիւն կայ, թէ գիւղացին է ծախողը 30—40 պուդ կարիքից ստիպւած թէ գիւղատնտեսական ընկերութիւնը, հաւաքելով 4—5 վագոն միասին, հասկանալի է որ գինը շատ տարբեր կլինի:

Իսկ եթէ գիւղատնտեսական ընկերութիւնը պատ միջոցներ ևս ունենայ, նա չի շտապի իր ցորենը ծախելու, այլ կլսպասի լաւ գնի (որը գարնան դէմ սովորաբար միշտ բարձրանում է) և այդպիսով իր անդամներին մեծ օգուտ կտայ:

Ներկայումս գիւղատնտեսական ընկերութիւններից շատերն են հացահատիկ ամբարում:

Օրինակ կարլովի ընկերութիւնը 1904 թ. ամբարեց և վաճառեց 7194 պագ հաճար, 42747 պուդ ցորեն, 351 պուդ գարի, 425 պուդ վարսակ:

Ամբարումը յաջող անցաւ. ընկերութեան գործիչները ամեն ջանք գործ դրին, որպէսզի ազգաբնակութիւնը գործից օգուտ ստանայ. նրանց յաջողւեց շուկայի գինը 5—10 կող. բարձրացնել. բացի այդ ընկերութիւնը այնքան յաջող տարաւ գործը, որ Պօլտաւայի հացահատիկի համար շուկայի գնի հետ համեմատած 1—2 կ. աւել էր վճարում: 1906 թ. կարլովի գիւղատնտեսական ընկերութիւնը ամբարել և վաճառել է մօտ 80 հազար պուդ այլ և այլ հացահատիկ:

Գիւղացու հացահատիկը վաճառելու գործում ամենից աւելի մեծ արդիւնքների հասաւ Ալեքսեևի գիւղատնտեսական ընկերութիւնը. մինչև նիւթական մեծ միջոցներ ձեռք բերելը ընկերութեան գործը դանդաղ էր առաջ գնում. տեղական գործիչները—ընկերութեան անդամները, հասկանալով դրա պատճառը, վարկատու ընկերութիւն հիմնեցին, որտեղից իւրաքանչիւր գիւղացի կարող էր փոքր տոկոսով աշնանը իրան անհրաժեշտ գումարը վերցնել:

Ցիշեալ ընկերութիւնը, ֆինանսների մինիստրութիւնից 17 տարով և 4<sup>0</sup>/₀ 25 հազար ըուբ. փոխ վերցնելով, մի շտեմարան հիմնեց (հացահատիկ ջոկել-զտելու և պահելու տեղ), որը տեղաւորում էր 240 հազար պուդ հացահատիկ, և վարկատու ընկերութեան օժանդակութեամբ սկսեց հացահատիկ ամբարել:

Գործը հետեւեալ կերպով էր կազմակերպւած. կալ անելուց յետոյ գիւղացին իր հացահատիկը տանում է գիւղատնտեսական ընկերութեան, ածում է շտեմարանը, որտեղ այդ հացահատիկը մաքրում և զտում են, և իր բերքի քանակութեան համեմատ ընկալազիր (կվետանցիւ ստանցիւ ստանում):

Եթէ նրան հէսց այդ լուսէին փող է հարկաւոր, նա գնում է, վարկատու ընկերութեան մօտ գրաւ գնում շտեմարանից ստացած ընկալազիրը և փող ստանում, իսկ նրա ապրանքը պահում է շտեմարանում մինչև գինը բարձրա-

նալը։ Ազպիսով շտեմարանում մեծ քանակութեամբ՝ երբեմն տասնեակ վագոններով հացահատիկ ամբարելով, ձմեռը կամ գարնանը դիւղատնտեսական ընկերութիւնը աւելի թանկ գնով է ծախում, քան աշնանը։

Իր գոյութեան ժամանակամիջոցում (2 տարւայ ընթացքում) Ալեքսեևի գիւղատնտեսական ընկերութեան շտեմարանը հաց վաճառելու գործում տեղացիներին հնարաւորութիւն տւեց մօտ 20000 ըուբ. խնայողութիւն անելու, դեռ չհաշւած այն, որ նրա գործունէութեան շնորհիւ հացի գինը ամբողջ շրջանում բարձրացաւ, որովհետև հացահատիկ հաւաքող առնողները (սկուպչիկ) աւելի թանկ էին վճարում

Փ.

Գիւղատնտեսական ընկերութիւնների գործունեութեան միացումն։

Ընկերութիւններից մի քանիսը չբաւականալով գիւղատնտեսական բերքերի վաճառման գործում առանձին գործունէութեամբ, աշխատում են դաշնակցութեամբ միանալ միմեանց հետ այնպէս, ինչպէս առանձին գիւղացի հողատէրերը միացել, ընկերութիւն են կազմել։

Ինչպէս որ առանձին հողատէր գիւղացու ապրուստը հեշտացաւ ընկերութիւն կազմելուց յետոյ, այնպէս էլ առանձին գիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութիւնը հեշտացաւ,

երբ նրանք միացան դաշնակցութիւն կազմեցին աւելացնելու իրանց ուժերը նոր գործերի համար և միջնորդների դէմ կուելու։

Այդ կողմից լուրջ աշազրաթեան է արժանի Պերմի նահանգի կրամնութիւնների գաւառի գիւղատնտեսական ընկերութեան գործունէութիւնը։

Այդ կողմերում վերջին տարիները գիւղացիների մէջ շատ տարածւել է արօտացանութիւնը։

Գիւղացիք արդէն իրանք էին սկսել ծախել բաւականաչափ առւոյտ ու այլ խոտեր և միջնորդ առնողները շատ էժան գնելով նրանցից սերմնացան, և իսկական՝ յաճախ շատ բարձր գնով ծախելով, ահազին օգուտներ էին ստանում։

Գիւղացիների սերմնացուն լաւ գնով վաճառելու նպատակով հիմնած գիւղատնտեսական մանր ընկերութիւնները իրանց ձեռը անցկացրին այդ գործը։

Սակայն գիւղատնտեսական ընկերութիւնները բաւարար միջոցներ չունէին և առանձին առանձին էին գործում ուստի և թոյլ գուրս եկան միջնորդ առնողների դէմ կուելիս, և գործը դանդաղ ու թոյլ էր առաջ գնում։

1906 թ. ամառայ վերջում գիւղատնտեսական այդ չորս ընկերութիւնները պայման կապեցին գործը միասին, ընկերական հիմունքներով վարելու. միջնորդական գործերի համար շտեմարան բաց արեցին և գործը վարելու համար ընկերութեան լիազօրներից բիւրո

կազմակերպեցին:

1907 թւի օգոստոսին այդ ընկերութիւնների միացման առաջին տարեցանը լրացաւ և բիւրօի հաշւէտութիւնից երեսում է, որ մի տարւայ ընթացքում շտեմարանն ընդունել է և գաւառից գուրս արտածել 30822 ր. 74 կ. 4314 պուդ 33 ֆ. զանազան արօտների սերմացու. ամբողջ գործից 1082 բուք. զուտ արդիւնք է մնացել այսինքն՝ գործին մասնակցող ամեն մի գիւղատնտեսական ընկերութեան 270 ր. 50 կ:

Այս օրինակը ցոյց է տալիս որ գիւղատնտեսական ընկերութիւնների փոքր միութիւնն անգամ շատ աւելի ուժեղ է առանձիններից: Ինչ որ մի գիւղատնտեսական ուժից վեր էր, կարողացան կատարել բոլորը միասին դաշնակցելով ընդհանուր գործի համար:

Միայն կրամնութիմսկ գաւառի գիւղատնտեսական ընկերութիւնները չեն, որ իրանց թուլութեան պատճառը անջատ՝ բաժան-բաժան լինեն էին համարում:

Արդէն Վալոգդայի, Պետերբուրգի և Պոլտաւայի նահանգների գիւղատնտեսական ընկերութիւնները հարց են յարուցել միութիւն կազմելու՝ միասին գիւղատնտեսական գործիքներ, սերմացու և պարարտանիւթ գնելու և գիւղատնտեսական բերքերը վաճառելու համար:

Ընկերութիւնների այդ միութիւնները նոյն քան օգտակար են առանձին ընկերութիւններին, որ-

քան վերջինները՝ առանձին հողատէրերին:

## Դ.

Ինչպէս են հիմնում գիւղատնտեսական ընկերութիւնը եւ ինչպէս վարում երա գործերը

Ընդհանուր գծերով գիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութեան հետ ծանօթանալուց յետոյ, անցնենք այն հարցին թէ ինչպէս պէտք է հիմնել այդ ընկերութիւնները, ինչպէս վարել նրա գործերը և որտեղից են նրանք իրանց գործունէութեան համար միջոցներ հայթայթում, ում օգնութեան վերայ կարող են յոյս դնել:

Գիւղատնտեսական ընկերութիւններ կազմելու համար ամենից առաջ պէտք է որ գիւղում կամ շրջանում գոնէ մի քանի հոգի գտնելի գիւղացու տնտեսութեան և առհասարակ նրա ամբողջ կենցաղի հարցով հետաքրքրուող պէտք է որ այդ անձինք լաւ ըմբռնեն, հասկանան միացման ամբողջ կարևորութիւնը, անհրաժեշտութիւնը և վճռեն իրանք աշխատելաւ ընդհանուր գործի համար հասարակութեան օգտին:

Մինչեւ որ այդպիսի մարդկանց գոնէ մի փոքրիկ շրջան չլինի, ընկերութիւն էլ չի լինի, որովհետեւ ընկերութիւն հիմնելը այնքան գժւար բան չէ, աւելի գժւար է նրան կեանք տալը, կենսունակ և օգտակար գարձնելը և ոչ թէ հալից ընկած մի հիմնարկութիւն, որ ապրում է միայն թղթի վերայ:

Այդ կարող են անել գործին անձնւէր աշխատառները, միանոյն է ով էլ որ լինեն դրանք՝ գիւղացիք, թէ գիւղի ինտելիգենտները՝ ուսուցիչը, բժիշկը, ֆելդշերը և այլն:

Գործին ձեռք զարնելու պատրաստ այլպիսի անձերի մի խումբ հաւաքւելուց յետոյ, կարելի է գործը սկսել, այսինքն տեղական գիւղացիների մէջ անդամագրաթիւն բանալ, բոլորին և ամեն մէկին բացատրելով, թէ ի՞նչ է գիւղատնտեսական ընկերութիւնը և ի՞նչով կարող է օգտակար լինել:

Ապա պէտք է գիւղատնեսական ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւնը ձեռք բերել (Ռուսաստանում գործող գիւղատնեսական ընկերութեանց կանոնադրութիւնների ահազին մեծամասնութիւնը այդ կանոնադրութեան համաձայն է կազմւած):

Կանոնադրութիւնը կարելի է ձեռք բերել կամ զեմստոյի վարչութիւնից (գաւառական կամ նահանգական քաղաքներում), կամ զեմստոյի աղբոնումից՝ եթէ կայ, կամ գիւղատնեսութեան վերատեսչից (նահանգական քաղաքում) և վերջապէս Պետերբուրգի երկրագործական դեպարտամենտից:

Կանոնադրութիւնը ստանալուց յետոյ բոլոր հետաքրքրողները միասին կարգալով և քըննելով, պէտք է կանոնաւորապէս ծանօթանան նրա հետ: Եթէ հիմնադիր անդամները նորմալ կանոնադրութիւնը իրանց համար յամար և հա-

մապատասխան են գտնում այն ժամանակ գրում են վրան ինչ որ անհրաժեշտ է (ընկերութեան անունը, անդամավճարի քանակը, խորհրդի անդամների թիւը և այլն) և ինպիր են գրում նահանգապետին: Կանոնադրութիւնը (բացերը լցնելուց յետոյ) և հիմնադիր անդամների ստորագրած խնդիրը կամ պատով են ուղարկում նահանգապետին կամ անձամբ են տալիս,

Խնդրի տակ կարող է ստորագրել 10—15  
—20 և աւելի հիմնադիր:

Հիմնադիր անդամ կարող են լինել կամ համագիւղացիներ, կամ մի գիւղաշրջանի զանազան գիւղերից և նոյնիսկ գաւառի մի քանի տարբեր գիւղաշրջաններից:

Նահանգապետին սովորաբար այսպէս են խնդիր գրում:

. . . (այս ինչ) նահանգի պ. Գլխաւորին:

Մենք, Երկանի նահանգի Էջմիածնայ գաւառի Վաղարշապատ գիւղի ներքոյ ստորագրեալ բնակիչներս անհրաժեշտ համարեցինք ընդ սմին ներփակած կանոնադրութեան համաձայն գիւղատնեսական ընկերութիւն հիմնելու, ուստի խոնարհաբար խնդրում ենք թոյլ տալ բանալու «Վաղարշապատի գիւղատնեսական ընկերութիւն», որի գործունէութեան շրջանը պիտի լինի էջմիածնայ գաւառի . . . (այս ինչ) գիւղերը (կամ

բոլորը): Ներկայ խնդիրը յանձնարարում ենք յանձնելու (եթէ պոստով չի ուղարկւում) Վաղարշապատ գիւղի բնակիչ . . . (անուն ազգանուն):

Թիւ ամսաթիւ  
հիմնադիր անդամների սուրագրութիւն.

Հասցե՝ Վաղարշապատի պոստատուն  
Էջմիածնայ գաւառ.

Հիմնադիր անդամները կարող են նորմալ կանոնադրութիւնը ունէ պատճառով իրանց համար անյարմար կամ անհամապատասխան դանել. այդ դէպքում նրանք կարող են լրացումներ և փոփոխումներ մտցնել, կարող են նաև գիւղատնտեսական ընկերութեան սեփական կանոնադրութիւն կազմել:

Վերջին ժամանակներս Մոսկվայի և նրան հարևան նահանգներում սկսել են հիմնել այսպէս կոչւած աշխատաւորական գիւղատնտեսական ընկերութիւններ, որոնց կանոնադրութիւնը աւելի լայն է, քան գիւղատնտեսական ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւնը (աշխատաւորական գիւղատնտեսական ընկերութեան կանոնադրութիւնը կարելի է բերել տալ Մոսկվայից՝ Մосква, Сухаревская-Садовая ул., домъ ѿѣзднаго земства № 269).

Այդպիսի դէպքում (կանոնադրութիւնը փոխելու կամ նորը կազմելու դէպքում) պէտք է հետեւալ կերպով վարել. կանոնադրութիւնը

քննելուց եւ փոփոխութիւններ մտցնելուց յետոյ հիմնադիր անդամները դրանցից երկու օրինակի տակ ստորագրելով, գիւղատնտեսական ընկերութիւն կազմելու ցանկութեան մասին գրւած խնդրի հետ միասին ուղարկում են նահանգապետին:

Խնդրի և կանոնադրութեան հետ պէտք է ներկայացնել նաև նոտարի վկայագրութիւնը հիմնադիր անդամների ստորագրութեան վաւերականութեան մասին և 1 ր. 50 կ. փող՝ գիւղատնտեսական ընկերութեան բացումը յայտարարել տալու համար:

Խնդրի տալուց յետոյ մի ամսւայ ժամանակամիջոցում նահանգապետից պէտք է պատասխան ստացւի հիմնադիրների անունով ընկերութեան հաստատելու կամ չհաստատելու մասին:

Նորմալ կանոնադրութեամբ գիւղատնտեսական ընկերութիւն բանալու թույլտւութիւն ստացւելուց կամ հին կանոնադրութիւնը հաստատեած վերադառնելուց յետոյ հիմնադիր անդամները ընդհանուր ժողով են գումարում և հետեւալ հարցերը վճռում, տեղական գիւղատնտեսութեան որ կարիքները ամենից շուտ են զոհացում պահանջում և ինչնույն պիտի պարապի գիւղատնտեսական ընկերութիւնը ոկրում, ինչ ծախսեր ունի անելիք և որտեղից ճարել այդ միջոցները, ում ընտրել ընկերութեան խորհրդի անդամ, մշտական գործավարութեան համար և այլն. հէնց այդ ժողովում էլ, եթէ նոր ցանկացող լինի, կարող է ընկերութեան անդամ գրւել

Գիւղատնտեսական ընկերութեանը նոյն իսկ իր գործունէութեան հէց սկզբին գոնէ փոքրիկ միջոցներ են պէտք՝ գրասենեակ պահելու, գիւղատնտեսական թերթեր բերել տալու, գիւղատնտեսական գործիքների պահեստ հիմնելու և այլ ձեռնարկութիւնների համար։ Առանց փողի ոչինչ չի լինի անել և միջոցների պակասութիւնը սովորաբար շատ զանգաղեցնում է գիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութիւնը։

Ընկերութեան միջոցների աղբեւք կարող են են կազմել՝ անդամավճարները, նւիրատութիւնները, երկրագործութեան դեպարտամենտի և այլ հիմնարկութիւնների նպաստներն և փոխառութիւնները, մասնաւոր մարդկանցից և առետրական հիմնարկութիւններից վերցրած փոխառութիւնը, ընկերութեան զանազան ձեռնարկութիւններից (պահեստարանից, շաեմարանից և այլն) ստացւած օգուտը։

Անդամավճարի քանակը բոլոր իսկական անդամների համար հաւասար է սահմանւում և զանազան ընկերութիւններինը տարբեր է լինում։ Սովորաբար գիւղատնտեսական մանր ընկերութիւններում 50 կ. մինչև մի ութիւն է սահմանւում։

Կան ընկերութիւններ, որոնց տարեկան անդամավճարը 3—5, երբեմն էլ 10 ըտք. է, բայց դա բացառապէս հարուստ տեղերում։ Սակայն անդամավճարը շատ մեծ շինելու դէպում էլ նա ընկերաթեան եկամտի գլխաւոր աղբեւքը չի հանդիսանում։

Յաճախ ուեէ ձեռնարկութիւն սկսելու դէպում (կարագի գործարան, սպառողական կըրպակ կամ պահեստանոց), ընկերութեան անդամները 5—10 ը. բաժնէվճարով մի գումար են կազմում և այդ փողով գործը սկսում։ Երբեմն 2—3 հարուստ անդամները գիւղատնտեսական ընկերութեան նպաստաւոր պայմաններով փոխ են տալիս գործը սկսելու համար անհրաժեշտ գումարը։

Նւիրատութիւններ էլ են լինում։ Այդպէս օրինակ Ռաշեկ գիւղատնտեսական ընկերութիւնը բացւելիս նրա անդամներից մէկը փորձական դաշտի համար 4 դեսետին հող նւիրեց այն պայմանով, որ ընկերութիւնը 4 տարի օգտակ նրանից ձրիաբար, և նրա եկամտով երկրագործական արտել հիմնելու ֆոնդ կազմւի. իսկ եթէ երեք տարւայ ընթացքում արտել չկազմւի, հողը վերադարձւում է նւիրողին։

Գիւղատնտեսական ընկերութեան անդամները փորձական դաշտ կազմակերպելու համար խորհուրդ և ցուցմունք խնդրեցին զեմստոյի աղբոնումից։

Բացի այդ, գիւղատնտեսական ընկերութիւններն իրաւունք ունեն փոխառութիւններ անել մասնաւոր մարդկանցից և առետրական հիմնարկութիւններից։

Շատ յաճախ ընկերութիւնը պահեստ կամ կրագակ հիմնելիս գործարաններն և առետրական

հիմնարկութիւններն ապրանքը պարտքով են տալիս:

Վաճառականներն ապրանքը ուրախութեամբ պարտք են տալիս ընկերութիւններին. դա աւելի անվտանգ է, քան առանձին, մեկ մարդու՝ օրինակ խանութպանին վստահանալը:

Յաճախ վաճառականներն ապրանքը կոմիսիայով են տալիս, այսինքն ընկերութիւնը վճարում է դրա գինը միայն ծախելուց յետոյ:

Սակայն չպէտք է մոռանալ, որ պարտքով կամ կոմիսիայով վերցնելը թանկացնում է ապրանքն. ուստի աւելի լաւ է, եթէ հնար կայ, ապրանք գնելու փողը մէկից փոխ վերցնելով, կամիկի (նազդ) գումարով գնել. այդպիսով աւելի շատ զիջում կարելի է ստանալ:

Երբեմն գիւղատնտեսական ընկերութիւնների պահեստանոցներին օժանդակութիւն են ցոյց տալիս զեմստուծներն, իրանց պահեստանոցներից կոմիսիայով ապրանք բաց թողնելով կամ նպաստաւոր պայմաններով մեքենաներ և դրձիքներ պարտք տալով:

Առհասարակ շատ նահանգների զեմստուծները գիւղատնտեսական ընկերութիւններին մեծ օգնութիւն են ցոյց տալիս՝ նրանց բոլոր ձեռնարկութիւնների նկատմամբ:

Իսկ զեմստուօյի ապրոնոմը միշտ էլ յաճախակի և ցանկալի հիւր է ընկերութեան ընդհանուր ժողովում, որտեղ նրանք գիւղացու անտեսութիւնը բարելաւելու մասին զեկուցումներ

և դասախոսութիւններ են կարդում:

Գիւղատնտեսական ընկերութիւններին մի քիչ օգնում է նաև երկրագործութեան գեղարտամենալը, նրանց տալով բեղմնաւորութեան համար եզներ, բարելաւած կամ նոր բոյսերի սերմնացուներ, գիւղատնտեսական ցուցահանգէմների համար նիւթական նպաստներ և մեղալներ (զեմստուծներն էլ են տալիս նպաստներ ցուցահանգէմների համար), փորձնական դաշտեր, պաղատու ծառերի տնկարաններ կազմակերպելու միջոցներ, օգնում է նաև ժամանակաւորապէս որոժնաջոկիչ մեքենաներ, հեղկացիրներ (հեղուկ, օրինակ՝ միջամներ ոչնչացնելու դեղեր սրակելու գործիք) և աղեր ուղարկելով վասակար միջամների դէմ կուելու համար:

Երբեմն էլ փոքրիկ օգնութիւն է ցոյց տալիս գիւղատնտեսական ընկերութիւններին նաև պետական բանկը, փոխառութիւն տալով, օրինակ հասարակական շտեմարանում ամբարւած հացահատկի ստացագործ և կամ զեղչելով ընկերութեան մուրհակները:

Օրինակ կարովի գիւղատնտեսական ընկերութիւնն իր անդամներին կալսելու մեքենաներ, սերմնացաններ և այլ գործիքներ պարտք տալով, նրանցից մուրհակ է վերցնում և զեղջում (ուշիաբւատ) պետական բանկի տեղական բաժնմունքում:

Գիւղատնտեսական ընկերութեան մեծ օգուտ կարող է տալ վարկային ընկերութիւնը, իր ան-

դամներին երկրագործական մեքենաներ և գործիքներ գնելու համար որոշ գումար փոխ տալով կամ հասարակական շահմարանում ամբարւած հացահատիկ և զիւղամատեսական այլ բերքերի ստացագրով պարտք տալով:

Բացի այդ, զիւղամատեսական ընկերութիւնը կարող է վարկատու ընկերութեան անդամագրւել և միւս անդամների նման որոշ գումար փոխ առնել, օրինակ օրինակելի անտեսութիւն հիմնելու, կարւած գնելու, առևտրական ձեռնարկութիւն սկսելու, հացահատիկ ամբարելու շենք կառուցանելու, պահեստանոց հիմնելու և այլ ձեռնարկութիւնների համար:

Այդ պատճառով էլ զիւղամատեսական ընկերութիւններից շատերը հոգս են տանում իրանց գործունէութեան շրջանում վարկատու ընկերութիւն հիմնելու, որի հետ յետագյում զիւղամատեսական ընկերութիւնն աշխատում է ձեռք ձեռքի տած, որովհետև այդ երկու ընկերութիւններն էլ սերտ կապ ունեն միմեանց հետ իրանց գործունէութեան թէ ոզով և թէ նպատակներով, գործունէութեան, որ ուղղւած է ընդհանուրի բարիքին՝ զիւղացու կենցազի բարւոքման:

Բայց ամենամեծ տջակցութիւնը զիւղամատեսական ընկերութիւնները փոխադարձօրէն միմեանցից պիտի սպասեն այն է՝ ջոկ-ջոկ մանը զիւղամատեսական ընկերութիւնների գործունէութեանց միացումից, ընդհանուր և սերտ

փոխադարձ գաշնքից, նոյնպէս և զիւղացիութեան փոխօգնութեան վրա հիմնւած ուրիշ կօսպերախւ հիմնարկութիւնների (վարկատու ընկերութիւններ, կարագ հարելու ընկերութիւններ, սպառզական ընկերութիւններ և այլն) դաշնակցութիւնից:

Այն ժամանակ նրանք թէ միջոցներ կունենան և թէ ոյժ՝ արդիւնաւոր գործունէութեան համար, որովհետև «ոյժը միութեան մէջ է, թուլութիւնն անջատութեան»!

Գիւղամատեսական ընկերութեան բոլոր գործերին, նրա միջոցներին և ձեռնարկութիւններին հսկում է բոլոր անդամների ընդհանուր ժողովը:

Ընդհանուր ժողովն ընկերութեան գլխաւոր տէրն է, որովհետև ընկերութիւնը հէնց իրանց, անդամների օգտի համար է կազմակերպւած և ոչ թէ մի այլ բանի համար:

Դիւղամատեսական ընկերութիւնների լաւութիւնն էլ հէնց այն է, որ զրանով զիւղացիք միանում են ընդհանուր գործի համար, որը նախ և առաջ իրանց է օգտա բերում և գործերը վարում են իրանք, առանց կողմնակի ցուցումների, այնպէս, ինչպէս որ իրանք են ցանկանում և ինչպէս որ ձեռնառ են համարում:

Ընկերութեան ամեն մի անդամն ընդհանուր ժողովին ձայնի իրաւունք ունի և կարող է աղաւորէն յայտնել իր կարծիքը. բոլորն էլ հաւասար են, մեծ ու փոքր չկայ, ընկերութեան բոլոր անդամներն էլ զործի իրաւահաւասար և ինքնազլուխ տէրն են և միատեղ աշխատում են

իրանց սեփական օդտի համար. ոչ ոստիկանութիւնը, ոչ էլ կառավարութիւնն առհասարակ իրաւունք ունին գիւղատնտեսական ընկերութեան գործերին խառնւելու:

Անդամների ընդհանուր ժողովները լինում են տարեկան (հերթական) և արտակարգ: Ընկերութեան բոլոր անդամները չեն կարող իրանց գործերը քննելու համար յաճախ հաւաքւել, այդ պատճառով էլ տարեկան մի անգամ հերթական ժողով է գումարում տարւայ վերջը, ընկերութեան բոլոր գործերը լրանալուց յետոյ:

Այդ ժողովում գիւղատնտեսական ընկերութիւնն, այսպէս ասած, յետ է նայում, այսինքն դատում է, թէ ի՞նչ է արել ինքը այդ տարւայ մէջ՝ քննում է գումարների ել և մուտքի տարեկան հաշիւը, ընկերութեան և նրա այլ և այլ ձեռնարկութիւնների (պահեստանոցի, սերմնագտիք վայրերի և այլ գործունէութեան) հաշետւութիւնը:

Հէնց նոյն տարեկան ժողովում գիւղատնտեսական ընկերութիւնն, ինչպէս ամեն մի տէր, նայում է առաջ, ապագային, նա խորհրդակցում է՝ թէ ինչո՞վ պէտք է զբաղւի ընկերութիւնը հետևեալ տարին, ինչպիսի ծախքեր է անելու և որտեղից ճարել միջոցները. սրանք բոլորն էլ այնպիսի գործեր են, որ պէտք է առաջուց ըլնոել և նախատեսնել.

Բացի տարեկան՝ հերթական ժողովները, գիւղատնտեսական ընկերութիւններն ունենում

են նաև արտակարգ ժողովներ, մի քանիսը նոյն խել ամսական մի անգամ, բայց սովորաբար արտակարգ ժողովներն աւելի քիչ են տեղի ունենում՝ տարեկան 5—6 անգամ:

Արտակարգ ժողովներում կարգացւում են գիւղատնտեսութեան վերաբերեալ հարցերի մասին այլ և այլ գեկուցումներ, դասախոսութիւններ և զրոյցներ. զեկուցումներ են տրւում նաև ընկերութեան ձեռնարկած զանազան գործերի մասին և այլն:

Գիւղատնտեսական ընկերութեան անդամներ՝ հողագործ գիւղացիները սովորաբար մշտապէս զբաղւած են իրանց գործերով, ամեն մէկն իր առանձին տնտեսութեամբ, ուստի և չէին կարող յաճախօրէն հաւաքւել ընկերութեան գործունէութեան բոլոր ընթացիկ հարցերը վճռելու համար, ինչպէս որ պահանջում է հասարակական գործը:

Այն ինչ գիւղատնտեսական ընկերութեան շատ ձեռնարկութիւնները, գործերը մշտական (երեմն ամենօրեա) հսկողութիւն են պահանջում, պէտք է որ տէրն աչքը չհեռացնէ նրանց վրայից, չի կարելի հօ առևտրական գործ վարել (ինչպէս օրինակ երկրագործական մեքենաների պահեստանոցը) ամսական մի անգամ հաւաքւելով:

Բացի այդ մեծ ժողովում յաճախ շատ վէճեր և տարածայնութիւններ են լինում, այդ պատճառով էլ աւելի դժւար է միմեանց հաս-

կանալ և ընդհանուր համաձայնութեամբ վճռել ինդիքը, որով և գործին շատ անդամ պատ է հասնում:

Ուստի և հասարակական գործը մշտապէս վարելու համար տարեկան ընդհանուր ժողովն երեք տարով ընտրում է լիազօր անդամներ, որոնք կազմում են ընկերութեան խորհուրդ:

Խորհուրդը, ընկերութեան՝ այսինքն գլխաւոր տիրոջ տւած լիազօրութեամբ վարում է ընկերութեան բոլոր գործերը:

Խորհուրդը, որ բաղկացած է լինում ընկերութեան մի քանի անդամներից ընտրում է ընդհանուր ժողովում երեք տարի ժամանակով. սակայն եթէ ժողովի կամքը կանոնաւորապէս չի կատարում, կամ հասարակութեան գործերն անյաջող է վարում, ընդհանուր ժողովը կարող է հեռացնել նրան և նորն ընտրել:

Իսկ գործ միշտ էլ շատ է ունենում խորհուրդը, եթէ ոչ սկզբին գէթ մէկ—երկու տարուց յետոյ. Նա պէտք է զիւղատնտեսական պահեստանոց, շտեմարան պահէ, ընկերութեան անդամներին ժամանակաւոր գործունէութեան համար տրւած հասարակական գործիքներին հսկէ, պէտք է հսկէ կենդանիների վրայ բեղմնաւորութեան վայրերում, կտուավարէ ընկերութեան գրադարանը և նրա միջոցները, թղթակցէ նրա բոլոր գործերի վերաբերմամբ և ուրիշ շատ գործերով զբաղւի:

Խորհուրդը գործում է ընդհանուր ժողովի

տւած լիազօրութեան սահմաններում. Նա թէն հասարակական տնտեսութեան մշտական կարգադրիչն է, սակայն իրաւունք չունի ոչ մի նոր և կարևոր գործ սկսելու՝ առանց բոլոր անդամների՝ ընդհանուր ժողովի համաձայնութեան, եթէ վերջինս առաջուց լիազօրութիւն չի տւել:

Ժողովի նկատմամբ խորհուրդը նոյնն է, ինչ որ գործակատարը (պրիկաշչեկը) տիրոջ առաջ. Նա պարտաւոր է ժողովին ամեն տարի հաշիւ ներկայացնել իր գործունէութեան, ընկերութեան բոլոր ձեռնարկութիւնների վիճակի և արած ծախսերի մասին:

Առանց ընդհանուր ժողովի համաձայնութեան խորհուրդն իրաւունք չունի հասարակական փողերից ծախսեր անելու:

Խորհուրդն իր բոլոր գործերը բաց և հրապարակօրէն պիտի վարէ (ինչպէս որ հասարակական բոլոր գործերը) և ընկերութեան անդամներից գաղտնի չպիտի լինի:

Այդպիսով խորհրդի վրա մեծ բան է ծանրանում՝ ահազին պատասխանաւութիւն: Կարելի է առանց սխալւելու տաել, որ խորհրդի եռանդից, հմտութիւնից և գործին անձնւէր վերաբերելուց է կախւած զիւղատնտեսական ընկերութեան ամբողջ աշխատանքը. Խորհուրդն ինչպէս ամեն մի գործի կարգադրիչ, ընկերութեան սիրտն ու հոգին է հանդիսանում:

Այդ պատճառով էլ ընկերութիւնը շատ զգոյշ և արջանայաց պիտի լինի խորհրդի անդամներին

Ընտրելիս: Նա պէտք է մօտուց և լաւ ճանաչէ այն մարդկանց, որոնց վստահանում է այդպիսի մի գործ:

Այդ ընտրելի անձերից նախ և առաջ պէտք է պահանջել, որ նըանք սրտանց նւիրւած լինեն այն գործին, որը յանձն են առնում վարելու, որ սիրեն և պատրաստ լինեն իրանց ոյժերը ընդհանուր գործին նւիրելու՝ դա առաջին պայմանն է. ով որ այդ յատկութիւնը չունի, չարծէ նրան ընտրել, եթէ նոյնիսկ նա բոլորից յարգւած մի անձնաւորութիւն լինի. միայն աշխատելու ցանկութիւն ունենալիս, իր գործը սիրելիս կարող է մարդ օգնել գիւղատնտեսական ընկերութեան. հոգ չէ, եթէ նա ծանօթ էլ չլինի նոր գործին. նա հեշտութեամբ և շուտով կսովորի, եթէ հետաքրքրւում է նրանով և, ընդհակառակը, եթէ մէկը հասարակութեան, ընդհանուր գործի օգտին աշխատելու ցանկութիւն չունի, որքան էլ զիտցող, հմուտ մարդ լինի՝ նրա գիտելիքները քիչ օգուտ կըերեն:

Աւելորդ է ասելն անգամ, որ խորհրդի անդամներն ազնիւ և վստահելի մարդիկ պիտի լինին, որովհետեւ նրանց յանձնաւում է պատասխանաւու գործ և յաճախ մեծ գումարներ:

Տարեվերջին խորհուրդն իր գործունէութեան հաշիւն է ներկայացնում ընդհանուր ժողովին և որովհետեւ գործը շատ բարդ է լինում և խորհրդի գործունէութիւնը (գործավարութեան կանոնաւորութիւնը, բարեխղճութիւնը և այլն)

դժւար է հէնց այդ ժողովում ստուգել և գնահատել, ուստի ընդհանուր ժողովը ընտրում է մի քանի անձերից բաղկացած վերաքննիչ յանձնաժողով, որը հակում է խորհրդի գործունէութեան, մանրաման ստուգում է նրա փողային հաշիւները և այդ բոլորի մասին գեկուցում է ընդհանուր ժողովին:

Խորհրդի և վերաքննիչ յանձնաժողովի անդամների թիւը որոշում է ընդհանուր ժողովը, որը սովորաբար առաջիկայ գործի մեծութեամբ և բարգութեամբ է զեկավարւում: Եթէ գործը մեծ է, շատ՝ աւելի մեծ թւով խորհրդի անդամ են ընտրում (6—8—10). իսկ եթէ գործը փոքր է, գեռ նոր սկսած, բնտրում են 3—4 հոգի:

Խորհրդի անդամները և նախագահը սովորաբար վարձատրութիւն չեն ստանում, որովհետեւ նրանց պաշտօնը պատւառը է համարւում: Միայն գանձապահը և քարտուղարը խորհրդի անդամներից լինելու դէպքում ոռճիկ են ստանում, որովհետեւ նրանց վրա ահազին գործ է ծանրանում, որը յաճախ կլանում է նրանց ամբողջ ժամանակը. մարզը ստիպւած է լինում հասարակութեան օգտին իր տնտեսութիւնը երեսի վրա թողնելու, այդ պատճառով էլ բնական է, որ նրա աշխատանքը վարձատրւած պիտի լինի:

Գիւղատնտեսական ընկերութեան համար շատ մեծ նշանակութիւն ունի քարտուղարը, մանաւանդ՝ երբ նա գիւղատնտեսական կրթութիւն ստացած անձնաւորութիւն է:

Այդպիսի մարդը մշտական և շատ օգտակար խորհրդատու է հանդիսանում ընկերութեան անդամների համար նրանց անտեսական գործերի նկատմամբ:

Ընկերութեան գործունէութեան հէնց սկզբի ժամանակներից այդպիսի քարտուղարը մի ահազին դանձ է:

Այդ պատճառով էլ երբէք չպէտք է ժլատութիւն անել քարտուղարի ոռոճկի նկատմամբ և ըստ հնարաւորութեան պէտք է փորձւած ու յատկապէս զիւղատնտեսական կրթութիւն ստացած մասնագէտ մարդ հրաւիրել:

Տեղեակ մարդու խորհուրդները, նրա մշտական մասնակցութիւնն ընկերութեան գործերին և օգտակար աշխատանքը միշտ էլ կծածկեն նրա ոռոճկի ծախսը:

Անա այս է համառօտապէս զիւղատնտեսական ընկերութիւն բանալու և նրա գործերը վարելու կարգը:

Այդ կարգի ամենազիստուր արժէքն այն է, որ զիւղացիք իրանք են հոգում իրանց անտեսութիւնը բարւոքելու մասին, իրանք են օգնում իրանց այնպէս, ինչպես որ լաւ են համարում և գործում են լիովին անկախ, ինքնուրոյն:

Բացի այդ, այդտեղ ամեն բան միատեղ և բոլորի առաջ բացարձակ է կատարւում, և ոչ թէ ծածուկ, գաղտնօրէն:

Ընկերութեան բոլոր անդամներն ընդհանուր գործի իրաւահաւասար տէրերն են հանդիսանում:

Գիւղատնտեսական ընկերութիւնների այդ յատկութիւնները զիւղացիների համար շատ արժեքաւոր են և այնքան կարևոր, որ պէտք է ցանկալ նրանց ամենալայն տարածումը զիւղերում:

Ե Զ Բ Ա Փ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Գիւղատնտեսական ընկերութիւններից շատերի գործունէութիւնը քիչ նկատելի է թւում, մանաւանդ նրանց համար, որոնք վարժւել են նրան, որոնց աչքի առաջ է ընթանում օրէցօր:

Այնուամենայնիւ չի կարելի չասել, որ գրեթէ ամեն մի զիւղատնտեսական ընկերութիւն շատ նորութիւն է մտցնում զիւղատնտեսական կեանքի մէջ:

Բացի զիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութեան այդ տեսանելի արդիւնքները, որոնք յիշատակեցինք վերև, բացի այն, որ զիւղատնտեսական ընկերութիւնները զիւղացիութեան մէջ հետաքրքրութիւն զարթեցրին գէպի իր անտեսութեան բարւոքումը, և կանգնած ջուրը ժաժ տալով, նրան կենդանի հոսանք դարձրին, նրանք շատ գործ կատարեցին նաև ընդհանուր կուլտուրայի տեսակալէալից՝ ըբջակայ աղգարնակութեան մէջ զարթեցրին ինքնագործունէութիւն, հետաքրքրութիւն գէպի հասարակական գործը և աստիճանաբար վարժեցրին հասարակական ընդհանուր գործով զբաղւելու:

Այդ վերջին հանգամանքը թերես պակաս

կարեոր չէ խուլ, յետ ընկած գիւղում, քան  
գիւղատնտեսական ընկերութեան մնացած գործ-  
նական ձեռնարկութիւնները:

Ահա թէ ինչպէս է գնահատում գիւղատն-  
տեսական ընկերութիւնների այդպիսի նշանա-  
կութիւնը ժաբկովի գիւղատնտեսական ընկերու-  
թեան թղթակիցը: «Վարկասու ընկերութեան հետ  
միասեղ, գիւղատնտեսական ընկերութիւնը գիւ-  
ղամիջին մի կալած դնեց, որը շուառվ ամե-  
նակենանի մի կենտրոն դառաւ, որտեղ հա-  
ւաքում է ժողովուրդը. ընկերութիւնը հէնց  
այդտեղ պահում է զրադարձն, ընթերցարձն,  
բերել է տալիս գիւղատնտեսական թերթեր.  
ամսէնը մի անգամ, երբեմն էլ աւելի յաճախ,  
սարքում են ընդհանուր ժողովներ, որտեղ զե-  
կուցումներ են կարգացում արօտացանութեան,  
պարտիզանութեան և այլ առարկաների մասին:

Իսկ գիւղատնտեսական ընկերութեան կըր-  
պակում և ընթերցարձնում մշտապէս ժողո-  
վուրդ է հաւաքում տնտեսական այլ հարցե-  
րի մասին զրոյց անելու:

Գիւղացիք վկայում են, որ գիւղատնտեսա-  
կան ընկերութիւն հիմնելուց յետոյ կեանքն  
աւելի հետաքրքիր և լաւ է դառել:

Զեմստոյի ազրոնոմները, որոնք իրանց  
գործունէութեամբ յաճախ առիթ են ունենում  
շփւելու գիւղացիութեան, նրա կարիքների և  
շահերի հետ, նոյնպէս գնահատել են գիւղատն-  
տեսական ընկերութիւնների ահապին նշանակու-

թիւնը գիւղի համար:

Գիւղատնտեսական ընկերութիւնների օգ-  
տակար նշանակութիւնը գնահատել են թէ գիւ-  
ղական ինտելիգենցիան և թէ ինքը գիւղացիու-  
թիւնը:

Գիւղացիութիւնն արդէն զգում է և ըմբռ-  
նում, թէ դրանք որքան նորմուծութիւններ են  
բերում գիւղական կեանքին:

Ակամայից մտաբերում է մարդ մեր գիւղատն-  
տեսական ընկերութիւնների նորագոյն պատմու-  
թիւնից մի դէպք:

Երկու երեք տարի առաջ Մոսկվայի մօտ  
գտնւած մի փոքրիկ գիւղում հաւաքւեցին  
տեղական գիւղացիք իրանց կարիքների մասին  
խորհրդակցելու և գիւղատնտեսական ընկերու-  
թիւն կազմակերպելու: Քննեցին, խորհրդակցե-  
ցին և վճռեցին ընկերութիւնը հիմնել: Իսկ երբ  
սկսեցին ցըւել, նոր միայն ուշագրութիւն դար-  
ձրին նոր հիմնարկութեան առաջին ժողովի ան-  
սովոր պարագան՝ ժողովը գիւղական գերեզմա-  
նատանն էր կայացել:

— Իզուր չէ, որ մենք այստեղ հաւաքւեցինք, —  
ասացին գիւղացիք, այստեղ թաղեցինք հին գիւ-  
ղացիութիւնը, որովհետեւ վերջինն արդէն ապրեց  
իր գարը և նրա փոխարէն ծնւեց նորը:

Այսպէս բացարեցին իրանք գիւղացիք նրանց  
համար նոր գործի՝ գիւղատնտեսական ըն-  
կերութեան նշանակութիւնը: Նրանք հասկացան,

որ գիւղացիական հին կեանքը, անտեսութեան  
եղանակն ու կարգերը պէտք է ընդմիշտ թաղ-  
ւեն, և նոր կարգեր, նոր կեանք պէտք է փըն-  
տրել, որպիսին պահանջում են վերջին տարինե-  
րի մասնակիւնութիւնը:



Յ. Գ. Հրատարակելով ներկայ սիրուն գըր-  
քոյլը, աւելացնում ենք, որ այս բոլորը լիակա-  
տար կերպով կիրագործի մեր կեանքում այն  
ժամանակ, երբ կունենանք զեմստօ և, որ  
զիստորն է՝ գիւղատնտեսական ուսումնարան-  
ներ:


Պահանջենք զեմստօ և գիւղատնտեսական-  
տեխնիքական ուսումնական բարեկարգութիւնը:

Ա. Բ.



Կարեւոր սպազրասահալներ:

Էջ	առաջ	առագրւած է	պիտի լինի
10	11 վեր.	ով է իմանում	ով իմանում է
13	5 ներք.	ցանքսացանութիւն	ցանքսափո- խութիւն
14	9 »	ունի	ունենայ
26	13 վեր.	տարածում են	տարածում են
26	14 »	սերմնատուներ	սերմնացուներ



Բ. Ա. Բուդութեանի աշխատութիւնները

1. Առաջին օգնութիւն մինչև քժշկի դալը (սպառ)	5 4-
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը	5 »
6. Ի՞նչ է անառակութիւնը	5 »
7. Վեներական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն	2 »
9. Մեր նկարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմին մէջ	10 »
12. Դեղախալ (զօրօտուխա)	10 »
13. Ո՞վ է յանձառը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և զաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15 »
17. Մարմամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	20 »
19. Կինը և աղամարդը	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն կամ օպերացիա	5 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (զլիի և ողնաշարի).	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »
26. Քուն և երազ մի (պատկերով)	25 »
Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10 »
27. Գործարան թէ երկրագործութիւն	15 »
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20 »
29. Մտերմական խորհուրդ պատանիներին (օնանիզմ)	20 »
30. Գոյութեան կուլ.	20 »
31. Ուղղոյլք Վիրիազ	25 »
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20 »
33. Անառակութիւն և պոռնկութիւն	20 »
34. Նուէր հայ զինուրին	20 »
35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն)	20 »
36. Նուէր հայ գվարցականին (Մեր օրերը)	10 »
37. Ութ ժամեայ բանուրական օր (մի պատկեր)	10 »
38. Ֆողովրդական առողջապահութիւն (հիւանդացում և մահացութիւն)	10 »
39. Երկու խօսք զիւղացուն	10 »
40. Սով (մի պատկերով)	10 »

Պահեստը գտնուում է՝ Ս.-Գետերբուրգ  
«Պուշկինեան արագատիս» Լիշտուկով փ. 4.



NL0293171

«Ազգային գրադարան

15537

